



ՄԻՈՏ

1975

ՄԱՐՏ — ԱՊՐԻԼ ԹԻՒ 3 — 4

ՄԻՈՆ

ԽԹ.

ՏԱՐԻ - ՆՈՐՇՐՋԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

1975

Մարտ - Ապրիլ

Թիւ 3 - 4

1975

March — April


No. 3 - 4

SION

VOL. 49

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem
Editor-in-chief: Archbp. Shahe Ajamian Editor: Ara Kalaydjian



St. James Press
Jerusalem



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կ Ա Մ Ք Ի Ո Ւ Ժ Ը

ԱՆՀԱՏՆԵՐՈՒ Թէ ժողովուրդներու կեանքին մէջ կամքը այն է, ինչ որ է աւելը բոյսերուն համար. աւելը, որուն վազը բոյսերու երակներուն մէջ կեանքի սարսուռը կը տանի արեւին բացուած տերեւներուն և աճումի հրաշքով կը պսակէ զանոնք: Եթէ պէտք ըլլար անպայման սահմանել, թերևս պիտի ըսէինք որ կամքը՝ կեանքին անյողողղ նայելու, նպատակի մը ձգտելու ուժն է, բարձունքներու երազէն բռնկուիլը. մէկ խօսքով, կամքը կը սնի տեսիլքով: Հետևաբար ինչպէս անտեսիլք անհատներու, նմանապէս և ապագայի տեսիլքը չունեցող ժողովուրդներու կեանքը աննպատակ է ու անբերրի, խոտի ժամանակաւոր գոյութիւն մը պարզապէս:

Սակայն, ամէն բանէ վեր, կամքը փաստն է բարոյալքումի և յուսահատութեան բացակայութեան: Կամքն է որ անհատին կուտայ կազմի տոկունութիւն, չարիքի և աղէտի ուրականին առջև չխոնարհելու ուժ, հաւատք՝ դէպի այն ամէնը ինչ որ գեղեցիկ է ու բարձր և որուն համար կ'արժէ ու պէ՛տք է ապրիլ կեանքը՝ օրերու և տարիներու այնքան սահմանափակ թիւով մը մեզի պարզեւուած: Պատմութիւնը մեզի կը սորվեցնէ թէ ինչպէ՛ս մեծ ժողովուրդներ, բիրտ ուժի յենարանին ապաւինած տիրեր են մարդոց և երկիրներու, և իրենց անմիջական նպատակը իրագործած՝ չեն կրցած նայիլ ապագային, յայտնատեսներ չեն եղած, չեն ունեցած դէպի վեր սլանալու պիւրկ մկանը, մնացեր են գամուած հողին ու անկէ եկած վաղանցիկ հաճոյքներուն, և հետևաբար բարոյալքումը անտեսանելիօրէն սողոսկեր է անոնց նկարագիրէն ներս, քանդեր է դիմադրելու ամէն պատնէչ և ի վերջոյ՝ յուսահատութիւնը զիրենք թաղեր է կործանումի խաւարին մէջ:

Մինչ, միւս կողմէ, նոյն պատմութիւնը կու տայ օրինակը փոքր ժողովուրդներու՝ որոնց հազարաւոր տարիներու վրայ ինկած կեանքը շարունակական հանդէս մըն է ապրելու կամքէն զրսպանակուած ստեղծագործութեան, անյողողղ աշխատանքի, ձրգտումի: Ասոնք երազ ունեցող ցեղերն են, և պարբերաբար իրենց հասնող բիրտ փոթորիկները ո՛չ մէկ վայրկեան կրնան նսեմացնել այդ երազին շքեղութիւնն ու փայլը: Կամքը, անոնց համար, անապատի «հրեղէն սիւն»ն է որ զանոնք դէպի կեանքի «աւետեաց երկիր»ը կ'առաջնորդէ: Այսպիսիներ վախը չեն տեսներ, ո՛չ ալ յուսալքումը, որովհետև իրենց աչքերը շողջողուն տեսիլքով մը գրաւուած են. իրենց ոտքերը կը սահին խոչընդոտներու վրայէն,

արգելքները չեն փշրեր՝ սակայն չեն ալ փշրուիլ անոնցմէ :
Անոնք մարդկային կեանքի փիւնիկ թուշուններն են :

* * *


Հայն ալ, անտարակոյս, ժողովուրդներու այս երկրորդ խումբին կը պատկանի, որովհետեւ անոր հազարաւոր տարիներու կեանքը արիւնոտ ալլ գեղեցիկ փաստ մըն է ապրելու բայց մանաւանդ ստեղծագործելու շտկարացող կամքի : Երբ, գրագէտին պատմումով, անօթի և հալածական հայ մանուկը իր մատիկով անապատի աւազին վրայ հայերէն գիրերը կը շարէ, ապա ուրեմն ցեղային այդ ապրելու կամքին համար վկայած կ'ըլլայ . նոյն բանը ըրած է հայը, դարերով, երբ անընդմէջ յարձակումներէ կամ աղէտներէ ետք վերադարձեր է իր բնակավայրը՝ ոչինչէն վերստին ստեղծելու ինչ որ իր տաղանդին ու ձեռքին արդիւնքն էր : Ամէն անգամ երբ աւերումի փոշին իջեր ու ծանրացեր է մեր հողին, բընութեան անխուսափելի մէկ օրէնքով՝ կեանքի կանաչ ու թարմ ծիրը բարձրացուցեր է տակաւին տկար իր հասակը և հաստատեր ապրելու մեր տենչը : Հայուն բազմադարեան կեանքը միակ և գեղեցիկ երգ մըն է փառարանութեան :

Սակայն իրը պատերուն շուքին և խոնաութեան մէջ ապրող թղուկ խոտին կեանքը չէ, առանձնացած, հովերէ պաշտպանուած, խորշակներէ ապահով, առօրեայի առողջ հոսանքէն կտրուած : Ո՛չ, Հայունը պայքարի կեանքն է հո՛ն, բաց դաշտին մէջ, բուքին առջև ու բարկ արեւին տակ, առանձին, ինք իր մատներով իր այսօրը և ապագան կառուցանող : Իրը՝ իմաստով լի, ըմբռնուած, նպատակասլաց կեանքն է, որուն յատակը նիւթը չի կազմեր :

Իրեւ մշակոյթ ինչ որ փրկուեր է դարերու աւերէն, աւելի քան բաւարար է վկայելու հայուն կամքի և ստեղծագործութեան առաքինութիւններէն . կեանքի հասկացողութեան գիծեր ասոնք՝ որոնցմով ան հպարտօրէն և պայծառ ճակատով մուտք կը գործէ ժողովուրդներու մեծ ընտանիքէն ներս, արդարօրէն առնելու բնտրեալներու աթոռը : Փոքր ժողովուրդ՝ մեծ ու ամուր մշակոյթով, զոր ան կերտեր է միմիայն իր կամքի ուժին յենած, միսմիւնակը, երևութապէս անյաղթահարելի պատուարներու դէմ մաքառելով : Փոքր ժողովուրդ՝ մեծ ու շքեղ տեսիլքով, որուն համար ան յաճախ զոհեր է ինչ որ ամենէն թանկագինն էր իրեն համար — կեանքը՝ որպէսզի «մահը կոխէ» և ապրի : Ապրի՛ իր տեսիլքին իրականացման համար, ստեղծէ՛ որպէսզի իրմէ ծնող գեղեցկութիւնները զարդարեն իր ու մարդկութեան հոգեկան գոնձարանները :

Այդ աննուազ կամքն է որ դարձեալ ինքզինք կը յայտնէ հիմա, երբ հայը, Հայաստանի մէջ թէ արտասահմանի, կ'ապրի ու կը ստեղծագործէ այնպէս ինչպէս ըրեր էին իր նախահայրերը, միշտ նոյն տեսիլքէն առաջնորդուած և շտկարացող քայլերով դէպի իր լուսեղէն ապագան զիմող :

Ա. Գ.



ԴԻՒԱՆ Ս. ՏԵՂԵԱՅ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Կը փակենք այստեղ մեր ներկայ տեղեկագիրը, մասնաւորելով շատ դրական ու զործնական կեցուածքը զոր Ձերդ Բարձր Սրբազնութիւնը ունեցաւ այս առիթով, որպէս զերազոյն պատասխանատուն Երուսաղէմական մեր ազգային-հոգեւոր սրբութիւններուն: Առանց ատոր, վէճերը կրնային երկարիլ, ծանծաղոտիլ և ամլանալ: Ու օղտագործելով այս առիթը, չենք կրնար լուսթեամբ անցնիլ այն իրողութեան առջեւն որ Ձերդ Սրբազնութեան պատրիարքութեան շրջանը եղաւ շատ բախտորոշ ու շինարար շրջան մը Երուսաղէմի համաբրիտօնէական սրբատեղիներուն մէջ Հայց. Եկեղեցւոյ ունեցած պանծալի իրաւանց ապահովութեան և տեւականացման տեսակէտէն:

Տակաւին քանի մը օրեր առաջ միայն աւարտեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Աստուածածնայ Գերեզմանին նորոգութիւնը: Գրեթէ անսպասելի նուաճում մըն է առիկա մեզի համար, որովհետեւ անիկա Սուրբ Տեղեաց կեանքին և իրաւական վէճերուն ամենէն կհաւանդեցին մին էր, երկարածղուած վերջին երեսուն տարիներուն երկայնքին: Կատարուեցաւ այդ վերանորոգութիւնը իրաւական այդ շատ փափուկ կէտին վրայ առանց դոյզն ինչ կորսնցնելու մեր դարաւոր իրաւունքներէն: Այս մասին պիտի անդրադառնանք շուտով աւելի մանրամասն տեղեկագիրով մը, որուն մէջ տրուած պիտի դանէք այդ սրբաւայրին յատուկ իրաւական, հնադիտական, պատմական բոլոր տուեալները, մեր կարելիութեան չափով:

Ձերդ Սրբազնութեան պատրիարքութեան վերջին տասներկու տարիներուն տեղի ունեցաւ և տակաւին կը շարունակէ տեղի ունենալ Ս. Յարութեան Տաճարի մեծ վերանորոգութիւնը: Գործ մը որ Հայ Երուսաղէմէն կը խլէ այնքան ճիգ, եռանդ ու զոհողութիւն, մանաւանդ տնտեսական դեռնի վրայ: Մեզի իրաւակից Օրթոտոքս և Կաթոլիկ Եկեղեցիները չունեցան որեւէ մասնօգուծիւն, վասնզի անոնք ունէին զիրենք ողնայարող կառավարութիւններու ամուր յենարանները թէ՛ բարոյական և թէ՛ տնտեսական տեսակէտներէ:

Իսկ մե՞նք: Մեր Ժողովուրդի ժամանակաւոր օժանդակութենէն յետոյ


ունէինք միայն ու միայն մեր Ս. Աթոռին վտիտ հնարաւորութիւնները: Երբեմն յուսահատութեան հասնող այս պայմաններուն տակ, Ս. Յարութեան վերանորոգութեան գործը երբեք իր առջև փակ չգտաւ: Չեղբ Բարձր Արքայապետութեան սրտին դռները, ու Դուք Ձեր կարելի ու անկարելի բոլոր միջոցներով պայծառափայլեցիք այդ Սուրբ Տաճարը հարուստ եկեղեցական կազմակերպութիւններուն վայել փառքով ու վայելչութեամբ, ապահովեցիք մեր դարաւոր նուիրական իրաւունքները միջնադարին այդ սրբատեղիներէն ներս, ու ահաւասիկ հանդերձեալ էք դանոնք պատուով հրտակելու որպէս սմենէն թանկագին ժառանգութիւն ապագայ մեր ժառանգորդներուն:


«Իմ պատրիարքութիւնը հաստատուած է Ս. Յարութեան բուրվառին դրայ», ըսած էք հանդիսաւոր առիթով մը Երուսաղէմի Աթոռին սմենէն պատկասելի դահալայներէն մին, նշելով այսպէս մեր աստուածակոխ սրբատեղիները իրբն Հայ Երուսաղէմի գոյութեան իրաւունքին հզօրագոյն վաւերացողութիւնը: Սրբատեղիներու վերանորոգութեան Ձեր ճիշդ ու եռանդը ուրիշ բան չէ եթէ ոչ գործնականացումը մեծ պատրիարքի այդ մեծ մտածումին, այսինքն ամբաստանումն ու տեսականացումը Հայ Երուսաղէմի պանծալի փառքին գոյութեան իրաւունքին:

Պատմութիւնը թերեւ ժլատօրէն դիտէ մեր օրերը՝ անոնց ընկերային, անտեսական, քաղաքական և այլ պայմաններու պրիսմակին ընդմէջէն: Սակայն պատմութիւնը անփարան որ գնահատանքով պիտի դիտէ Ձեր պատրիարքութեան այս օրերը, երբ զայն դիտէ Ս. Տեղերու վերաչինութեան փառաւոր պրիսմակին ընդմէջէն:

Հայցելով աստուածային օրհնութիւնը մեր պանծալի Աթոռին, անոր արժանանալի Գահակային, Միաբանութեան և համայն Հայ ժողովուրդին,

Մատչիմք ի համբոյր Ձեր Ս. Աջոյն
 ԿԻԻՐԵՂ Խ. ՎՐԴ. ԳԱՐԻԿԵԱՆ
 Վերահսկիչ Սրբատեղեաց





Ս. ԱԹՈՌԻՍ ԲԱՐԵՐԱՐ

ՏԻԱՐ ՏԱՏՈՒՐ ՏԱՏՈՒՐԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Ուրբաթ, 25 Ապրիլ 1975, յետ ժիջօրէին, Ամմանէն դալով և Ս. Աթոռիս Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի ժիջոցաւ անցնելով Յորդանան գետի կամուրջ-սահմանադրութէն, Երուսաղէմ կարճ այցելութեամբ ժամանեց Ս. Աթոռիս բարերար Մեծ. Տիար Տատուր Տատուրեան:

Մեծախարզ բարերարը չորս օրեր հիւրը եղաւ Ամեն. Պատրիարք Ալըբազան Հօր՝ որուն հետ ջերմ հանդիպում ունեցաւ իր ժամանման երեկոյնի իսկ:

Երուսաղէմ հասնելէ ետք, հազիւ քիչ մը հանգչած պանդոկին մէջ, Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ Տիար Տատուրեան Ս. Աթոռ ժամանեց, ուր շատ հաճելի և յուզիչ քանի մը ժամեր անցուց: Նախ այցելեց Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարան, ուր, Տեսուչ Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գարիկեանի առաջնորդութեամբ այցելեց Վարժարանին Մանկապարտէզի, Նախակրթարանի և Երկրորդական բաժինի գրեթէ բոլոր բաժինները, հետաքրքրուելով աշակերտներու առօրեայով և աւանդուած դասանիւթերով: Մեծախարզ բարերարը յուզումի պահեր ապրեցաւ, երբ առաջին անգամ ըլլալով հոն հանդիպեցաւ այն աշակերտներուն, որոնք «Տատուրեան սաներ» կը կոչուին, ի պատիւ իրեն: Ինչպէս ծանօթ է, Մեծ. Տիար Տատուր Տատուրեանի ձեռնարկութեամբ, հովանաւորութեամբ և նիւթական լայն աջակցութեամբ էր որ 1968ին Երուսաղէմի մէջ հաստատուեցաւ «Տատուրեան սաներ» անունով ճանչցուող գրութիւն մը, որուն շնորհիւ այդ թուականէն մինչև այսօր աւելի քան 250 հայ տղաք առիթ ունեցան դալու Երուսաղէմ և Պատրիարքարանիս կրթական գոյգ օժանդներուն՝ Ս. Թարգմանչաց դպրոցին և ժառանգ. Վարժարանին ու Լնծախարանին մէջ ստանալու հայեցի ամբահիմ կրթութիւն մը:

Ապա Տիար Տատուրեան հանդիպեցաւ ժառանգաւորաց Վարժարան, ինչպէս նաև Տպարան:

Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վարդապետի ընկերակցութեամբ, մեծախարզ հիւրը այցելեց նաև Ս. Յարութեան Տաճար, ուր մանրամասնօրէն ծանօթացաւ տարիներէ ի վեր կատարուող նորոգութիւններուն, և մեծապէս խանդավառուեցաւ հայկական նորոգուած բաժիններուն շքեղութեամբ և զեղեցկութեամբ:

Տիար Տատուր Տատուրեան, Գերշ. Տ. Շահէ Աբքեպիսկոպոսի ընկերակցութեամբ այցելեց նաև Սիրոն լեռան հայապատկան Ս. Փրկիչի վանքը, և ծանօթացաւ հոն ևս կատարուող շինարարութիւններուն :

Մեծայարդ բարերարը քանի մը տեսակցութիւններ ունեցաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր հետ, որոնց ընթացքին մասնաւորաբար շեշտեց անհրաժեշտութիւնն ու կարևորութիւնը մնայուն և անձեռնմխելի հիմնադրամի մը ըստեղծումին՝ որուն արդիւնքով ապահովուէին և ընդարձակուէին կրթական գործն ու «Տատուրեան սաներ»ու դրութիւնը :

Տիար Տատուրեան ուրախ առիթը ունեցաւ ճաշելու իր այնքան սիրած «գաւակներ»ուն հետ Շարաթ կէսօրին, ի ներկայութեան Ամեն. Պատրիարք Ս. Հօր, Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Աբքեպիսկոպոսի, միաբան հայրերու, ուսուցիչներու և ուսանողութեան : Յարգելի բարերարը իր հայրական խօսքին մէջ կոչ քրաւ հետաքրքրութեամբ դիմք ունկնդրող սաներուն՝ լաւագոյն կերպով օգտուիլ Ս. Աթոռին կողմէ ընծայուած ուսանելու քացառիկ դիւրութիւններէն, և հետագային գործել ու ազրիլ իրրև հաւատացեալ և ազգանուէր Հայեր :

Մեծապէս խանդավառուած Երուսաղէմի մէջ իր տեսած կրթական ու շինարարական աշխատանքներէն, Ս. Աթոռիս բարերար Մեծ. Տիար Տատուր Տատուրեան Երկուշարթի, 28 Ապրիլին հրաժեշտ առաւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրէն և զէպի Միացեալ Նահանգներ մեկնեցաւ Պեն կուրթիօն օղակայանէն :



ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

176. ՄԻԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.
 Հարկ է նկատել թէ միաւորութիւնը ի միութիւն՝ երկու է : Արդ, միաւորութիւնը կրնայ ըլլալ նախ փոխարկութեամբ, երբ երկու միաւորեալներէն մին կը կորսնցնէ իր էութիւնը և սպառելով միաւորութեան մէջ՝ ամբողջովին միտին կը փոխարկուի : Ու այսպէս է կաթիլին՝ ծովուն հետ միաւորութիւնը :

Երկրորդ՝ միաւորութիւնը կրնայ լինիլ շփոթումով, երբ երկու միաւորեալները իրարու հետ կը փոփոխուին ու երկուքէն յառաջ կու գայ երկու միաւորեալներէն տարբեր երրորդ մը : Այդպէս է ջուրին՝ գինիին հետ միաւորութիւնը :

Միաւորութիւն կրնայ լինիլ նաև բազկացութեամբ, երբ իրարու քով եկած տարբեր կը հաւաքուին և կը կազմեն ուրիշ բան մը, բայց առանց իրենք փոփոխութիւն կրելու և առանց իրարու վրայ ներգործելու : Այդպէս է թերթերու և դիւբին միաւորութիւնը : Բնութեան մէջ շատ են այս կարգի օրինակները, որոնք միշտ կազմողական զօրութեամբ կը միաւորուին իրարու :

Ունինք տակաւին միաւորութեան շատ ուրիշ կերպեր՝ խառնումով, բարդութեամբ, բազազրութեամբ, սակայն ասոնք զանազան տեսակներ չէ որ կը կազմեն, այլ նախասացեալ միաւորութիւններուն կը վերածուին, կամ զոնէ անոնց ստորաբաժանումները կը կազմեն :

Նմանապէս, միաւորութիւնը կրնայ լինիլ պարզ և սոսկ միութեամբ, երբ միաւորները կը կազմեն բան մը՝ առանց սակայն փոխարկուելու, ոչ ալ շփոթուելու. անոնք առանց ներգործութեան ալ չեն մնար, այլ այնպէս կը միաւորուին որ երկուքը կատարեալ մէկ

ըլլան, առանց կորսնցնելու իրենց սեփական յատկութիւնները : Այսպիսի միաւորութեան օրինակը ունինք բնութեան մէջ, ուր նիւթեղէնը և հոգեղէնը այնպէս կը միաւորուին՝ որ կարծէք թէ իսկապէս և կատարելապէս մէկ անձ և մէկ բնութիւն լինին, առանց որ ո՛չ հոգեղէնը կորսնցնէ իր բնութիւնը, ոչ ալ նիւթեղէնը՝ իրը :

Միաւորութեան այս տեսակները չեն կըրնար պատշաճիլ աստուածութեան՝ ընդ մարդկութեան միաւորութեան, որովհետև փոխակերպումը և շփոթումը ի դէպ կու գան Եւտիքեսի բացատրութեան, իսկ բազկացութիւնը կը նմանի Նեստորի բնակահայութեան : Կը մնայ ուրեմն մեր միտքը պարզել տարբեր տեսակով մը, ուր արդարև օրինակը այնչափ մերձաւորութեամբ կը բացատրէ ճշմարտութիւնը, որչափ որ կարելի է սահմանաւորով մեկնել անսահմանը :

177. ՄԷԿ ԵՒ ԵՐԿՈՒ ԸՍԵԼ.
 Հարկ է խօսիլ նաև մէկ և երկու, կամ միութիւն և երկուութիւն բառերուն վրայ և ու : Բոլոր բառերուն կիրառութիւնը շատ կը տարբեր իրաց տրամաբանական կարգէն և իրական կարգին մէջ : Իրաց տրամաբանական կարգին մէջ ամենապարզ էակներն ալ, ու աւելի՛ ամենապարզ գաղափարները բանականութեան զօրութեամբ կրնանք բաժնել իրենց կազմիչ տարրերուն ու թուել իսկ տարրերը. այլ իրաց իրական կարգին մէջ այն ատեն միայն կրնանք ըսել երկու, երբ կ'ունենանք երկուքը՝ որոնք տարբեր գոյութիւն ունին և գոյութեան մէջ ալ տարբեր բնութիւն, և տարբերալ գործողութեանց սկիզբն են. այնպէս որ մէկ գործը մէկուն ըլլալ և միւսը՝ միտին, ու էթէ երբեք գործին լծակցութեամբ

դանուին դոնէ գործեր զորս մին ընէ կամ կրէ և միւսը մասնակցութիւն չունենայ ասոր մէջ :

Արդ, երբ երկուքը զատ զատ կը պահեն իրենց գործողութիւնները, այնպէս որ մէկը կարենայ բաժնուիլ միւսին ըրածէն, այն ատեն կրնանք ըսել թէ երկուք են . իսկ եթէ այնպէս ըլլայ միաւորութիւնը, որ միշտ և մէջն բանի մէջ մէկուն գործը հաղորդութեան մէջ ըլլայ միւսին հետ, այն ատեն այլևս չենք կրնար ըսել թէ երկուք են, թէ և կրնանք ըսել թէ երկուքէ մի են :

Այս կանոնին զօրութեամբ է որ մենք մարդրս չենք բաժնեք երկու բնութեան, թէպէտ կ'ըսենք թէ երկու բնութենէ է և զանազան գործողութիւններ կ'ընէ՝ առանց ստանալու և ֆնջելու երկուքին հաղորդութիւնը :

178. ՔԱՂԿԵԳՌՆԻԿՆԵՐԸ . Այս կանխարանական տեղեկութիւնները տալէ վերջ կը մնայ որչափ թէ ինչպէ՞ս եղած է միաւորութիւնը Քրիստոսի մէջ, և ի՞նչ է միաւորեալը . ա՞նձ թէ բնութիւն : Օրթոտոքս և Կաթոլիկ Եկեղեցիները կ'ըսեն թէ միաւորութիւնը անձին մէջ է որ կատարուեցաւ և ոչ թէ բնութեան . իսկ մենք կ'ըսենք թէ միաւորութիւնը կատարուեցաւ անձին և բնութեան մէջ միանգամայն :

Մեր տուած բացատրութիւններէն վերջ, այլևս հնար չէ մեկի վերադրել ոչ այն կարծիքը թէ մարդկութիւնը աստուածութեան փոխարկուած է, ոչ ալ այն թէ մարդկութիւնը և աստուածութիւնը շփոթուած են իրարու հետ և երբորդ մը եղած : Այդ մտոր իմացուածը երբեմն կը տրուի «Աստուածամարդ» բառին, զոր մենք զործածած ատեն զբացուցինք թէ ուղիղ իմաստին համեմատ կ'առնենք զայն, այսինքն իբրև Աստուած և մարդ միաւորեալ և ոչ թէ իբրև Աստուած և մարդ փոխարկուած ու շփոթուած :

Նոյն ուղիղ և անուղիղ իմացուածները կը տրուին խառնու՛մ բառին, զոր սմանք կ'իմանան իբրև շփոթեալ միաւորութիւն, և ուրիշներ՝ իբր անշփոթ միաւորութիւն . սակայն մեր կրօնական գրականութեան մէջ գրեթէ միշտ մերջին իմաստով ի կիր առնուած է Քրիստոսի վրայ և կը հասկցուի միաւորութիւն առանց շփոթման . այս պատճառաւ ու-

ղիղ է նաև «Աստուածախառն» բառին իմաստը, որովհետև անով ոչ թէ շփոթութիւն կը հասկնանք, այլ «նոր խառնու՛մն սքանչելի» որ է միաւորութիւն պարզ, ըստած նաև միութիւն :

179. ՔԱՂԿԵԳՌՆԻԿ ԳՐՈՒԹԵԱՆ ԳԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ . Արդ, անոնք որ Քրիստոսի մէջ երկու բնութիւններ կան կ'ըսեն և միաւորութիւնը անձնաւորութեան մէջ կը դնեն և ոչ թէ բնութեան մէջ, պարտին պարզորոշել թէ ո՞ր բնութիւնն է որ առանց անձնաւորութեան կը մնայ Քրիստոսի մէջ : Եթէ տրամարանական տեսակէտէ խօսին և ամբողջական աստուածութիւնը և ամբողջական մարդկութիւնը ուղեն իմանալ, այն ատեն պէտք է ընդունին թէ ինչպէս աստուածութիւնը ունի իր բնութիւնը և իր կատարեալ բանական ենթակայութիւնը, նոյնպէս և մարդկութիւնը ունի բանական ենթակայութիւնը, որովհետև ունի մարմին, հոգի և միտ . և ինչպէս չեն խղճիր ըսել թէ Քրիստոսի մէջ երկու բնութիւններ կան, նոյնպէս և պէտք չէ խղճին ըսելու թէ երկու անձինք կան ի Քրիստոս : Իսկ եթէ ըսեն թէ անձը մի է որովհետև չկայ մարդկային ենթակայութիւն, այն ատեն պիտի նմանին Ասողի՛նարի, որ ուրացաւ բանական հոգին Քրիստոսի մէջ և դրաւ միայն կենսական հոգին :

Գործեալ, պէտք պիտի ըլլայ բացատրել թէ ուրի՞շ է գործողութեան սկիզբը Քրիստոսի մէջ, ենթակայութենէ՞ն թէ բնութենէն : Ընկալեալ էարանական բացատրութեանց համեմատ, գործողութեանց սկիզբը բնութիւն կ'ըսուի եթէ երկու բնութիւններ կան . ապա ուրեմն գործողութեանց ևս երկու սկիզբներ պէտք է լինին Քրիստոսի մէջ, ու երկու բնութիւններէ սկսած գործողութիւնները զատուցեալ են Քրիստոսի մէջ իբրև երկու ազնիւ բխած ջուրեր, որոնք անկախաբար յառաջ խաղալէ վերջ իրարու կը խառնուին ջրախառնուածքին մէջ՝ որ է անձնաւորութիւնը : Արդ, եթէ Քրիստոսի մէջ երկու սկիզբներ կան գործողութեան, ապա ուրեմն երկու գործողներ կան, ու եթէ երկու գործողներ՝ ապա ուրեմն և երկու Քրիստոսներ, որ է նկատրական բաժանում :

Արդ, խօսելով ոչ թէ տրամարանական

այլ իրականութեան տեսակէտէն, եթէ Քրիստոսի մէջ զատ զատ երկու բնութիւններ կան, և միաւորութիւնը եղած է անձնաւորութեան մէջ, ասիկա քիչ մը միայն կամ բառացի կը տարբերի նեստորէն, բայց ըստ իմաստին կը տանի մարդ Քրիստոս-Աստուած բաժանման միեւնոյն կէտին, զոր չընդունիր Ուղղափառ Եկեղեցին:

Դարձեալ, իրապէս զատուցեալ բնութիւններ ընդունելը իրաց իրական կարգին մէջ՝ կը պահանջէ անհրաժեշտաբար որ Քրիստոսի մարդկային բնութիւնը իր գոյութեան մէջ գոյաւոր եղած ըլլայ՝ Քրիստոսի աստուածային բնութեան հետ ենթակայութեան միաւորութեան հասնելէ առաջ. ու այս առիթով ևս պէտք է ճշմարտութիւն Քրիստոսի մարդկութեան գոյաւորութիւնը՝ Աստուծոյ բանին հետ միաւորուելէ առաջ: Սակայն այս ալ հակառակ է Ուղղափառ վարդապետութեան, որ կը սորվեցնէ թէ Բանը մարդացաւ կամ միաւորուեցաւ մարդկային բնութեան հետ, և թէ Քրիստոսի մարդկութիւն չկար՝ իրր լոկ մարդ-Քրիստոս միաւորութեանէն առաջ: Ուրեմն և միաւորութիւնը կատարուած է բնութեանց մէջ, և ոչ թէ զատուցեալ բնութիւնները միաւորուեցան ենթակայութեան մէջ:

180. ՆՈՐԷՆ ՄԵՐ ԴԱԽԱՆՈՒԹԻՒՆԸ. Ուրեմն իրաւամբ թէ՛ փիլիսոսփայական և թէ աստուածաբանական ճշմարտութեամբ, մեր Եկեղեցին կը խորշի երկու բնութիւններ ըսելէ Քրիստոսի մէջ, այլ Մեծն Կիւրղի և ուրիշ ուղղափառ հայերու հետ կը դաւանի թէ «մի է բնութիւն Բանին մարմնացելոյ», և կը հաւանի ըսել թէ Քրիստոսի մէջ կայ «միաւորութիւն յերկուց բնութեանց», կամ, ինչպէս մեր հանգանակը կ'ըսէ, «միաւորեալ մի բնութիւն»:

Բայց եթէ պնդեն ըսելով թէ երկու բնութիւն կ'ըսեն Եւտիքեսի դէմ, որպէսզի չկարծուի թէ փոխարկուած կամ շփոթմամբ միութիւն կ'ընդունին երկու բնութեանց, կը պատասխանենք թէ պէտք չէ որ մոլորութեան մը կասկածը հրաւիրենք: Աւելի դիւրին, պարզ և յստակ է ժխտել նոյնինքն Եւտիքեսի բացատրութիւնը «անշփոթ և անայլայլելի» կամ «անխառն» բառերով, քան թէ կարծել թէ մէկ Քրիստոսը կը բաժնենք երկուքի անոր մէջ ճանհնայով գործողութեանց երկու գա-

տուցեալ իրական սկզբունքները: Զգուշաւորութիւնը աւելի մեծ պէտք է լինի հոն ուր գայթակղութիւնը դիւրին է, իսկ մարդկութիւնը աստուածութեան հետ շփոթելու և փոխակերպութեամբ կամ այլայլումով երբորդ բնութիւն մը կերպարանելու ճիգը այնքան արտաոց է և հակառակ՝ ողջմտութեան և տրամաբանութեան:

181. ԼԵՆՈՆԻ ՏՈՄԱՐԸ. Իսկ հակառակ կողմէն վտանգը այնքան մեծ է, որքան յայտնի է որ ոտնաքայլ մը միայն կը բաժնէ երկու բնութեանց Բանը երկու անձնաւորութեանց Բանէն: Ու ասիկա յայտնի է Լեոնի Տոմարի հետեւեալ խօսքերէն.

«Քանզի թէպէտ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս մի անձն է Աստուծոյ և մարդոյ, այլ՝ այլ է այն, որով երկոցունցն ևս հասարակ են անարգանքն, և այլ է այն՝ որով հասարակ են փառքն». և դարձեալ. «Զի երկոքին կերպարանքն գործեն հաղորդութեամբ միեւնոյն զայն որ ինչ իւրն է, այսինքն Բանն գործէ զոր Բանին է, և մարմինն կատարէ զոր միեւնոյն է». և դարձեալ. «Որպէսզի որ մերոց դարձանաց ի դէպ էր միեւնոյն միջնորդն Աստուծոյ և մարդկան մարդն Յիսուս Քրիստոս կարող լիցի մեռանելի միոյն և մի լիցի կարող մեռանելի միւսոյն»:

Այս բացատրութիւնները Քաղկեդոնի Ժողովին մէջ երկուանքի աեղի տուին և միայն Լեոնի պատուիրակներուն ճարտար դարձեւածքներովը և Մարկիանոսի սաստովը կարող եղան քողարկել խօսքը, իմաստը տրամաբանական տեսակէտի տանելով, մինչդեռ դաւանութիւնը իրաց իրական կարգին պէտք էր պատկանէր:

Արդ, եթէ երկմտութիւններ կան մեր բացատրութիւններուն մէջ, վասնզի չկայ մարդկային ասացուած մը զոր հնար չըլլայ դէպի չարը ծամածուել, և որովհետեւ միւս կողմէ շունինք աստուածային խորհուրդներու յատուկ բառարան, և սոփոսական ասացուածքները պարտաւոր ենք գործածել, և սակայն յայտնի և բացայայտ է թէ աւելի հեռու է իրաց իրական կարգի ուղիղ բացատրութեանէն Քրիստոսի մէջ երկու բնութիւններ ըսելը, քան թէ ըսել՝ «մի բնութիւն Բանին մարդացելոյ» և կամ «մի յերկուց անշփոթ» և կամ «միաւորեալ մի բնութիւն»:

Առ հասարակ, Երբորդութեան և մարդկութեան խնդիրներուն մէջ, որոնցմով կը դաւանինք «մի Աստուած յերիս անձինս» և «մի Քրիստոս յերկուց բնութեանց», Եկեղեցին ուղղագոյն կը համարի ըսել «մի յերիս» և «մի յերկուց», քան թէ ըսել «մի և երեք» և «մի և երկուք» :

182. ՄԵՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ . Իսկ թէ ճշգրտիւ ա՛յդ է մեր Ուղղափառ Եկեղեցիին վարդապետութիւնը, այդ յայտնապէս կը տեսնուի մեր կորովամիտ վարդապետներուն մօտ, որոնք ծաղկեցան դանազան ժամանակներու մէջ, մանաւանդ երբ Քաղկեդոնական և բնութեանական խնդիրներ արժարժուեցան ուղղափառ և օտարադաւան համազդիներուն մէջ : Այստիպիներէն եղան առաւելապէս Ներսէս Ծնորհալի և Գրիգոր Տաթևացի, ինչպէս նաև Յակոբ Նալբան պատրիարք :

Բաւական է կարգալ հատուածներ՝ ի Քրիստոս երկու բնութեանց խնդրոյն վրայ Ծնորհալիի գրած «Գիր հաւատոյ խոստովանութեան ի խնդրոյ Մանուէլի Ալէքսի, և ի սոհմանն հաւատոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ» (տպ. Երուսաղէմ, էջ 96, 102, 124), նոյնպէս և Տաթևացիի «Հարցմանց զիրք»-ին մէջ է. Գլուխին Զ. և ԺԴ. պարհները, և Նալբանի «Վէճ հաւատոյ»-ին մէջ Գ. և Դ. Գրութիւնները :

183. ՄԻԱԿԱՄԵԱՅՔ . Քրիստոսի անձին և բնութեան մասին եղած խօսքերը կը տարածուին Քրիստոսի մէջ եղած կամեցողութեան և ներգործութեան վրայ և սուպրաէզ կը բանան համանման խնդիրներու, որոնք երեցան Յոյներու և Լատիններու Եկեղեցիներուն մէջ՝ է դարուն, Միակամեայց յուզումներով :

Որովհետև շատեր եղան այդ խնդիրներուն պետերը ու զրեթէ կայսերական աշխարհներու բոլոր հայրապետները ի սկզբան յարեցան այդ վարդապետութեան, ինչպէս Կիւրեղ Աղեքսանդրացի, Սերգիոս Կ. Պոյսեցի, Հոնորիոս Հոռոմայեցի, այս պատճառաւ սովորութիւն չեղաւ մէկու մը անունով կոչել այդ վարդապետութիւնը : Ան կոչուեցաւ խնդրին անունով :

Եւտիքեան միաբաններուն և այս միակամեաններուն մէջ նմանութիւնը կոչման ձե-

ւին տեսակէտով է և ոչ թէ վարդապետութեան : Որովհետև, ինչպէս Եւտիքեանի մի բընութիւնը շփոթութեան վրայ չհիմնուած էր և ոչ թէ պարզ միաւորութեան, նոյնպէս և միակամեաններուն մէկ կամք ըսելը կը հաստատուէր մարդկային կամքի ուրացութեան վրայ, զայն ընկզմած կամ կորսուած համարելով աստուածային կամքին մէջ : Կամքին պէս կ'իմանային ներգործութիւններն ալ Քրիստոսի մէջ, ոչ միայն գործող ենթակային մէջ, այլև գործողութեան վերջին եզրին մէջ, շփոթելով բնութիւնները : Արդարև այսպիսի գանազանութեանց մէջ որոնք կը գլին կ'անցնին մարդկային մտքի կարողութիւնը, դժուարին է մեր սովորական բժրոնումներուն հետ համեմատուող կարողութիւններ կազմել : Սակայն պէտք է խորշիլ այն դրութիւններէն որոնք որևիցէ եղանակաւ կրնան ընդհարիլ Քրիստոսական խորհուրդներու չիմնական սկզբունքներուն հետ :

Արդարև վտանգաւոր է մէկ Քրիստոսը երկուքի բաժնելը որևիցէ երկուութեամբ, բայց անտղի է նաև աստուածութիւնը և մարդկութիւնը իրենց վերացական առումին մէջ խառնել կամ բարդել կամ յօդակապել իրարու հետ : Այդ երկու ծայրերուն միջակէտէն կ'ընթանայ մեր Ուղղափառ Եկեղեցւոյ վարդապետութիւնը և միաւորեալ միութեան մէջ կը հաստատէ բոլոր անօրինական խորհուրդներուն բացատրութիւնը :

184. ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ . Միակամեաններուն անունն ու խնդիրը զրեթէ անձանօթ մնացած է մեր մէջ, որովհետև Քաղկեդոնիկ նրբութեանց կանխագոյն մերժումը և Եփեսոսեան դաւանութեամբ բացայայտ դատապարտութիւնը տեղի չէր տար նոր յուզումներու . մինչ Միակամեաններու խնդիրը, ինչպէս կը վկայեն բոլոր ողջմիտ խորհողները, կէտ նպատակի ունէր սրբազրի Քաղկեդոնական կարծիքները և Եփեսոսի նախկին ու պարզ հաւատքին դառնալ :

Քրիստոսի մէջ մէկ կամք ընդունողները անոնք էին որ Քաղկեդոնի համեմատ երկու բնութիւն կը դաւանէին, և գոնէ կամքին ու գործողութեան միութեամբ կը կարծէին բուժել բնութեանց բաժանումը : Բայց հոս ալ շփոթումի կէտը մտաւ Եւտիքեան խորէն, և

դարձեալ յուղուեցաւ կայսերական սահմաններու քրիստոնէական աշխարհը, մինչև որ կրցան վերջ ի վերջոյ Հոռոմէականները յաղթել լիոնի Տոմարին բաժանական սկզբունքով: Եւ Ազաթան Հոռոմի հայրապետը իր կողմը գրաւեց կայսրը, որ հարաւային բռնութեանց քաղաքական մտանդներուն պատճառաւ յոյսը դրած էր արեւմտեայց վրայ: Ու 680ին Կոստանդին Պողոնատոս կայսեր հրամանաւ Կ. Պոլիս դումարուած ժողովին վճիռը հաստատեց Քրիստոսի մէջ երկու կամք և երկու ներդործութիւն ըսել, ինչպէս Քաղկեդոնի ժողովը 229 տարիներ առաջ վճռած էր երկու բնութիւն ըսել:


Այստեղ, խնդրին ուղիղ հասկացողութեան համար, հարկ է կամքին մէջ զանազանել կարողութիւնը գործողութեանէն, և կամքին գոր-

ծողութեան մէջ տարբերել իրարմէ իբրև բունական հոգեբանական նկատուած երևոյթները և դաստղութեան իբրև ազատ արդիւնք նկատուած գործողութիւնները:

Վերոյիշեալ վճիռին մէջ յաճախ յեղյեղուեցաւ զօրուքիւն (energia) բառը, որ Յունաց և Լատինաց համար աւելի կամքին կը պատշաճի: Երկու կամք ըսողները հակառակորդներուն խօսքերուն մէջ մարդկային կամեցողական գօրութեան կորուստը կ'ենթադրէին, իսկ միութեան մասին պնդողները կ'ըսէին թէ հակառակորդները երկու ազատ և անկախ գօրութիւններ կը քարոզեն, որով և երկու Քրիստոսներ՝ առանձնակի գործողն ու կրողը՝ նեստորի հասկացողութեան համեմատ:

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ . ՕՐՄԱՆԵԱՆ

(Շար . 19)



ԿՐՕՆԱԿԱՆ

Կ Ա Ն Ա Յ Ի Զ Ա Ր Ս Ա Ն Ի Ք Ը

Յովհաննու Աւետարանը կը պատմէ թէ Յիսուս, իր մկրտութենէն և քառասնօրեայ ասպախարութեան շրջանէն ետք, իր առաքելութեան սկսաւ Գալիլիոյ Կանա գիւղաքաղաքին մէջ կատարած հրաշագործութեամբ:

Հարսանիքի մը հրաւիրուած էին Ս. Կոյնն ու իր Միսթինը: Եւ, Արեւելքի մէջ ընդհանրացած սոսորտութեան համաձայն, գինին էր ամենէն շատ փնտուածը խրախճանքի պահուն, իրրեւ քիմքերը անուշցնող ու հարսնետրները երանութեամբ արբեցնող գերազանց ըմպելին:

Բայց յանկարծ յայտնի եղաւ որ գինին սպառած էր: Սիտլ տնտեսութիւն մը թէ հրաւիրեալներու թիւին արտակարգ յաւելումը պատճառ եղած էր այդ սպառումին: Աւետարանները ժլատ են այդ կարգի մանրամասնութիւններու հաղորդումին մէջ, որոնք արդէն ոչինչ կը պակսեցնեն ստակին թելադրականութենէն:

Ճարահատ, Տիրամայրը կը գիտէ Յիսուսի, գիտակ՝ անոր աստուածային զօրութեամբ ունեցած հրաշագործելու կարողութեան:

Քրիստոս իսկոյն կը գործէ հրաշքը: Ու ջուրը կը վերածուի գինիի: Աւելի անուշահամ՝ քան մինչ այդ մատուցուածը:

Ի՞նչ բարոյական դասեր կը պարունակէ Աւետարանին անդրանիկ հրաշագործութեան այս դրուագը:

Ա.— Նախ՝ հոն քացորոչ կը յայտնուի Քրիստոսի աստուածութիւնը: Աստուածային բնութիւնը Քրիստոսի: Հին և Նոր Ուխտերու մէջ մենք կը հանդիպինք սուրբերու, նահապետներու և մարգարէներու, որոնք կատարած են հրաշագործութիւններ: Տարբերութիւնը հոն է սակայն որ մինչ այս վերջինները այդ հրաշագործութիւնները կատարելու համար կարիքը զգացած են միշտ աղօթքի, երբեմն ալ ծոմապահութեան կամ ճգնակեցութեան, վերջապէս՝ դիմելու հրաշքին հեղինակ՝ աստուածային զօրութեան, Քրիստոս բոլորէապէս կատարեց հրաշքը իր իսկ բնութեան մէջ (իրրեւ աստուածային բնութեան) գլուխունդ զօրութեամբ:

Բ.— Ներկայ ըլլալով հարսանիքին և մասնակցելով հարսնետրնետուրախութեան, Քրիստոս արդարացումը կու տայ մեր ալ աշխարհիկ հաճոյքներու մասնակցութեան:

Կարգ մը կրօնքներու մէջ, անհատ մը արդար կամ կատարեալ նկատուելու համար պէտք է ենթարկուի ինքնազրկումի, հետու մնալով աշխարհիկ սոմախմբութիւններէ ու խնճոյքներէ և հետեւելով ճգնողական կամ անապատական կենցաղի: Հոգևոր ճամբարութիւններով տեսապէս մտադրուած՝

դանց պէտք է ընէ աշխարհէն եկած ամէն բարիք ու աշխարհիկ արժէքներով պայմանաւոր ամէն երջանկութիւն :

Քրիստոս սակայն մասնակցելով հարսանիքին, ցոյց տուաւ թէ քրիստոնէութիւնը հակառակ չէ անմեղ հաճոյքներու և թէ ուրիշներու ուրախութեան մասնակից ըլլալը ուրիշներու միշտին մասնակից ըլլալու հաւասար եթէ ոչ առաքինութիւն մը՝ դէթ բնական երեսոյթ մըն է, ո՛չ մէկ կերպով հակասող բարեպաշտական կենցաղի :


Գ. — Տիրամօր թախանձանքը իր Միածին Որդիին, երևան կը բերէ այլասիրութեան, իրերօգնութեան վսեմ զգացումը Ս. Կոյսին մօտ : Մեզմէ քանինն՝ իրենց սկանջներն ու քսակները կը խցեն մուրացիկի մը աղերսախառն պաղատանքներուն դէմ : Քանինն՝ իրենց «աւելցուք»էն փշբանք մը հանել կը զլանան կեանքէն ու բախտէն զարնուած ողորմելի արարածներուն : Քանինն՝ իրենց ձեռքէն եկած բարիքը կը զլանան՝ կարօտեալի մը բանաւոր մէկ խնդրանքին գոհացում տալու, ուրիշներու կարիքին գոհացումին օժանդակած ըլլալու անանձնական հաճոյքէն զրկելով նաև իրենք զիրենք : Մինչդեռ մեր պարտականութիւնն է, Ս. Կոյսի օրինակին հետեւելով, անանց սպասելու որ օղնութեան կարիքը զգացող անհատը կամ կաղմակերպութիւնը մեզի դիմէ, նրկատի առնել այդ կարիքը և ինքնամատոյց յօժարութեամբ ընդատաջ երթալ մեր միջոցներուն ներած չափով գոհացում տալու մեր նմաններու պէտքերուն :

Քրիստոսի այս առաջին հրաշագործութիւնը նկարագրուած է միայն Յովհաննու Աւետարանին մէջ : Սակայն իր պարունակած բարոյական այս դասերով ան նուազ կարևոր չէ Քրիստոսի միւս հրաշագործութիւններէն և առակներէն, որոնք բոլորը միասին կը կազմեն ներդաշնակ ամբողջութիւն մը, որոնցմէ մէկուն պակասը՝ զղալի բաց մը կը թողու քրիստոնէական կրօնի բարոյականը կազմող ընդհանուր դրութեան մէջ :

Հրաշքները յատուկ են բոլոր կրօնքներուն : Կրօնքի բոլոր հիմնադիրները կատարած են հրաշքներ և անոնց հետևորդները հաւատացած են հրաշքներու զօրութեան : Բայց քրիստոնէութիւնն է միայն որ հազցուցած է հրաշքին իր միատիք թելադրականութիւնը, երևութական հրաշքներէն ետք ու վեր՝ հաւատալով նաև իւրաքանչիւր անհասարկ հոգեկան աշխարհին մէջ իրագործելի հրաշքներուն, որոնցմով յեղաշրջուած է կենցաղը անհատներու և հաւաքականութիւններու, և որոնցմով Սողոմոն փոխակերպուած են քրիստոնէութեան մեծ ջատագով Պօղոս Առաքեալներու :

Ձանանք մենք ալ օգտուիլ հրաշքներու թելադրականութենէն :

ԳԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ



ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Ինչպէս Սփիւռքի բոլոր գաղութներուն, Երուսաղէմի մէջ ևս Ապրիլեան Եղեռնի վաթսուներեակի նշումը հանդիսացաւ յուզումի օր մը, երբ Իսրայէլի հայ գաղութը անխտիր իր յարգանքը յայտնեց Առաջին Մեծ Պատերազմի ընթացքին զոհուած աւելի քան մէկ միլիոն հայերու յիշատակին:

Հինգշաբթի, 24 Ապրիլ 1975, Երուսաղէմի և այլ քաղաքներու հայկական խանութները փակ էին ի յարգանս Ապրիլեան Եղեռնին, և գրեթէ ամէն հայտնի, ո՛ր յարանուանութեան աղ պատկանէր, առտունէ լեցուցած էր Ս. Յակոբեանց Տաճարը, գաւիթն ու շրջակայ անցքերը, ներկայ ըլլալու յիշատակի Սուրբ Պատարագին, զոր մատոյց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան: Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայրը ներկայ էր պատարագի ամբողջ ընթացքին, ինչպէս նաև Երուսաղէմի կրօնական համայնքներու ներկայացուցիչները և այլ անձնաւորութիւններ:

Հայ միութիւններու պատկանող հարիւրաւոր արիւնք և արեւոյշներ կը հսկէին ընդհանուր կարգապահութեան, մինչ գաւիթը, Երուսաղէմի հայկական հինգ կաթմակերպութիւններէն նշանակուած մարմին մը Ապրիլեան Եղեռնի վաթսուներեակը յիշատակող կրթֆանշաններ կը բաժնէր ներկաներուն:

Հանդիսաւոր Ս. Պատարագի ընթացքին քարոզեց պատարագիչ Սրբազանը նախ անդլեքէն և ապա հայերէն լեզուներով, և հբաւիրեց ներկաները միանայ և տէր կաղնիլ այն բոլորին՝ ինչ որ սուրբ էր և անկապտելի զանձ մեր նահատակներուն համար — Հայաստանեայց Ս. Եկեղեցին, մեր դարաւոր մը շակոյթը, աւանդութիւններն ու բարքերը, մեր լեզուն և դպրոցը:

Կատարուած հանդիսաւոր հոգեհանդիստէն ետք, Միաբանութիւնն ու Ժողովուրդը, նախազահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր և առաջնորդութեամբ հայ արի-արեւոյշներուն, թափօրական դնացքով և հանգստեան շարականներու երգեցողութեամբ ուղղուեցան դէպի Սիոն լեռան վրայ գտնուող Ս. Փրկիչ սաղային գերեզմանատունը, ուր խմբուեցան Աբարայի հերոսներու յուշարձանին առջև և ուր ղետեղուեցան մեծ թիւով փառաւոր ծաղկեպսակներ:

Ապա, Երուսաղէմի հայ միութիւններուն կողմէ խօսք առաւ Պրն. Յակոբ Տէմիրճեան, որ վերլուծեց հայուն նկարագիրը, կոչ բրաւ հաւատարիմ մընայ մեր ցեղային առաքինութիւններուն և աշխատիլ հայ Ժողովուրդի բարօրութեան համար:

Երեկոյեան Ժամը Տին, Հ. Ե. Միութեան սրահին մէջ տեղի ունեցաւ հայկական միութիւններուն կողմէ կաթմակերպուած յուշահանդէս մը, որուն նախազահեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, և որուն ներկայ եղաւ խումն բազմութիւն մը:

ՅԵՌԱԳԻՐՆԵՐ

Ապրիլեան Եղեռնի վարսունամեակին առիթով, Ս. Արտոյս Պատրիարարանը ստացած է հետևեալ արշտօնական հեռագիրները .—

Հայոց Ամեն . Պատրիարքին և
Հայ Համայնքին

Կը խնդրեմ որ բնդունիք մեր անկեղծ զգացումներն ու մասնակցութիւնը Հայ Համայնքի վիշտին, ի յիշատակ այն մեծ ողբերգութեան՝ որ էր Հայութեան մեծ մասին բնաջնջումը: Հայկական ողբերգութեան հանդէպ յուսութիւնը և զայն կանխելու անկարողութիւնը առաջնորդեցին ուրիշ շարք մը ոճիրներու, ինչպէս Եւրոպայի մէջ վեց միլիոն Հրեաներու բնաջնջման, ու մինչև այսօր փոքրամասնութիւններու և փոքր ժողովուրդներու հանդէպ շարունակուող դաժանութիւններուն և բնաջնջումին: Հայութեան բախտակից Հրեայ ժողովուրդը միշտ օգնութեան ձեռք պիտի կարկառէ՝ Հայ ժողովուրդի և անոր դարաւոր մշակոյթի վերականգնումին:

ՏՔԹ. ԶԵՐԱՀ ՎԱՐՀԱՅԹԻԿ
նախկին Նախարար և ներկայիս
անդամ Խորայէլի Խորհրդարանին

Ն. Ամենապատուութիւն
Եղիշէ Արքեպս . Տէրտէրեան
Պատրիարք Հայ Երուսաղէմի
Երուսաղէմ

Զեղի և Զեր եղբայրներուն հետ ենք՝ Զեր ժողովուրդին բաժին ինկած ահաւոր սարսափներու յիշատակի այս օրը:

ՆԷԹԱՆԵԼ ԼՕՐԶ
Խորայէլի Խորհրդարանի Ընդհանուր
Քարտուղար

2 Մայիս 1975

Գերաշնորհ
Տ. Շահէ Արքեպս . Աճէմեան
Հայոց Պատրիարքարան
Երուսաղէմ

Գերաշնորհ Սրբազան,

Ինձի պարտականութիւն տրուած է Հաղորդելու Զեղի, թէ Երուսաղէմի Քաղաքային Խորհուրդը իր վերջին նիստին Հայ ժողովուրդին հետ իր համակամութիւնն ու համակրանքը արտայայտեց՝ Հայկական ցեղասպանութեան վախճանամեակին առիթով: Քաղաքային Խորհուրդը միաձայնութեամբ որդեգրեց Քաղաքապետ Վսեմ . Քոլլէքի հեռազրին պարունակութիւնը՝ ուղղուած Ն. Ամեն . Տ. Եղիշէ Ս. Պատրիարքին: Ահաւասիկ այդ հեռագիրը:

Ն . Ամենապատուութիւն
 Եղիշէ Արքեպս . Տէրտէրեան
 Պատրիարք Հայ Երուսաղէմի
 Երուսաղէմ

Սարսափելի յիշատակներու այս տխուր օրը , Ձեր ժողովուրդի տառապանքներուն համար , արտօնեցէք որ Ձերդ Ամենապատուութեան արտայայտեմ մեր ալ մասնակցութեան զգացումները՝ յանուն Երուսաղէմի բնակիչներուն և մասնաւորաբար Հրեաներուն՝ որոնց ճակատադիրը յաճախ այնքա՛ն նմանեցաւ Հայերու բախտին :

Յուսանք որ Ձեր և իմ ժողովուրդներու տառապանքները անցեալին միայն պատկանին և երբե՛ք չկրկնուին :

Սոնարհարար Ձերդ ,
 ԹԷՏԻ ՔՈՒԼԷՔ
 Քաղաքապետ Երուսաղէմի

Ապա Քաղաքային Սորհուրդի բոլոր անդամները մէկ վայրկեան լուսթեամբ Հայ նահատակներու յիշատակը յարգեցին :

Անկեղծօրէն Ձերդ ,
 ԹԱՄԱՐ ԿՈՒԱՆ
 Արտաքին գործերու օգնական
 Վսեմ . Քաղաքապետին

Ն . Ամենապատուութիւն
 Եղիշէ Արքեպս . Տէրտէրեան
 Պատրիարք Հայ Երուսաղէմի
 Երուսաղէմ

Կը ցաւով որ Ապրիլեան յիշատակի պատարագին ներկայ պիտի չկարենամ գտնուիլ՝ Հնախատեսուած կարևոր գործի մը պատճառաւ :

Կը խնդրեմ որ ընդունիք համակրանքի անկեղծ զգացումներս Ձերի և Ձեր համայնքին համար :

ՄԻՔԱՅԷԼ ՔՒԱՅՆ
 Փոխ-Տնօրէն Քրիստոնեայ համայնքներու
 քաժիմի
 Կրօնից Նախարարութիւն

Ն . Ամենապատուութիւն
 Եղիշէ Արքեպս . Տէրտէրեան
 Պատրիարք Հայ Երուսաղէմի
 Երուսաղէմ

Հայկական ցեղասպանութեան վախճանամեակի տխուր առիթով , երբ մէկուկէս միլիոն Հայեր բնաջնջուեցան , մենք , կեթիթներու բարթիզաններս և կռուողներս , հակա-նացի կռուողներս և նացի ճամբարներու բանտարկեալները՝ ուր մեր մէկ-կերպորդը բնաջնջուեցաւ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքին , կը վափաբիւնք բոլոր ժողովուրդներուն մաղթել երկար կեանք , խաղաղութիւն և բարի դրացնութիւն :

ԿՕՏՖՐԻՏ ԲՕԼԹԻՄ
 յանուն հակա-նացի կռուողներու
 միութիւններու յանձնախումբին և նացի
 նամբարներու նախկին բանտարկեալներուն

Ա Ջ Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն



Տետրակներուն դպրոցիս
Դրասեղանին, ծառերուն
Աւազին վրայ և ձիւնին
Քու անունդ գրեցի:

Գրուած բոլոր էջերուն
Բոլոր ներմակ թուղթերուն
Քարին, արեան, մոխրին վրայ
Քու անունդ գրեցի:

Պատկերներուն ոսկեգօծ,
Ռազմիկներու զէնքերուն
Թագաւորի թագին վրայ
Քու անունդ գրեցի:

Անապատին, անտառին,
Ծաղիկներուն, բոյնին վրայ,
Արծազանգին մանկութեանս,
Քու անունդ գրեցի:

Գիշերներու հնայքին
Օրուան ներմակ հացին վրայ,
Եւ հարսնացեալ գարունին
Քու անունդ գրեցի:

Բոլոր լագուարթ լաթերուն,
Մամրոտ փայլով ջուրերուն,
Եւ լնակին՝ ողջ լուսին,
Քու անունդ գրեցի:

Հորիզոնին, դաշտերուն,
Թռչուններու թևերուն,
Ազօրիքի շուքին վրայ,
Քու անունդ գրեցի:



Արշալոյսի շողերուն
 Ծովուն վրայ, նաւերուն,
 Սէգ լեռներու գագաթին
 Քու անունդ գրեցի:

Փրփուրին վրայ ամպերուն
 Փոքորիկի երկունքին
 Եւ անձրևի յորդահոս
 Քու անունդ գրեցի:

Լուսանաճառն ձկներուն
 Զանգակներու գոյներուն,
 Թանձր ու կարծր նիւթին վրայ
 Քու անունդ գրեցի:

Արահետին սպասող
 Համբաներուն տարածուն,
 Անձայրածիր վայրերուն
 Քու անունդ գրեցի:

Վրան նրագին մշտավառ
 Եւ առկայծող իր լոյսին,
 Դրկից բոլոր տուներուն
 Քու անունդ գրեցի:

Միրգին վրայ նոր կիսուած,
 Հայելիին, սենեակիս՝
 Մահիս վրայ, սին խեցի,
 Քու անունդ գրեցի:

Շունիս անկուշտ և քնուշ,
 Ականջներուն վրայ ցցուած
 Եւ ձախաւեր իր քաթին
 Քու անունդ գրեցի:

Սեմին վրայ իմ դրան
 Եւ ընտանի իրերուն
 Օրհնուած կրակի բոցին վրայ
 Քու անունդ գրեցի:

Բոլոր մարդոց վրայ մորթին
 Ճակտին վրայ բարեկամին
 Ինձ երկարուած ձեռքերուն,
 Քու անունդ գրեցի:

Ցուցափեղկին վաճառքի,
 Շրթներուն վրայ ուշադիր,
 Նոյնիսկ վրան լուսքեան
 Քու անունդ գրեցի:

Խրնիքներուս աւերակ
 Փարոսներուս խորտակուած
 Եւ ձանձրոյթիս պատին վրայ
 Քու անունդ գրեցի:

Բացակային անփափաք
 Մենութեանս վրայ մերկ
 Եւ քայլերուս վրայ մահուան
 Քու անունդ գրեցի:

Առողջութեանս ետ եկած,
 Անհետացած վտանգին,
 Անյիշատակ յոյսին վրայ
 Քու անունդ գրեցի:

Միակ բառի մը ուժով
 Կեանքս նորէն կ'սկսիմ
 Ծնած եմ քեզ նանչնալու
 Քեզ կոչելու

Ա.ՉԱ.ՏՈՒԹԻՒՆ:

PAUL ELOUARD

Թրգմ. Ս. Ա. Մ.

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Ն Ե Ր Ո Ւ Ն

Վերցուցէ՛ք, եղբայրներ,
Քարերը ձեր շիրիմներուն,
Յետոյ եկէ՛ք վրկայելու
Ձախջախուած ձեր ոսկորներով :

Հորիզոնին դէմ
Պոռացէ՛ք,
Ձեր աղաղակը թող խոցէ
Ովկեաններու ջուրերն ամբողջ :

Եւ դուք պէ՛տք է ներկայ ըլլա՛ք
Անարդարութեան և վըշտի
Ամբողջական անգորութեան
Այս անհաւատալի պահուն :

Կանգնեցէ՛ք
Ձեր փոշիին վըրայ,
Եղէ՛ք կենդանի ուղեկից՝
Պայֆարին մէջ Տանդէական :

Եկէ՛ք, և թող
Առողջ բուրմունքը ձեր արեան
Արբընցնէ՛ք քրնացողներն
Զիրենք լափող թմրիրներէն :

Եկէ՛ք, լըֆելու
Բըռնաբարոյ պատմութեան
Մըքին բրածուն,
Եւ արդարութեան լոյսը պահանջեցէ՛ք :

Եկէ՛ք, բերէ՛ք
Ձեր խոցող ողբը,
Բըռնեցէ՛ք ֆամիներու
Տանջող նըշմարտութիւնը :

Եկէ՛ք, կամ մանաւանդ
Բերէ՛ք Աստուածը ձեր հետ,
Ձեր վէրքերովը պատուած . . .
Յանուն վաղուան արդարութեան :

Ա.Ի.ՍԻԱ. ԿԻՐԱ.ԿՈՍԵԱՆ

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Հեռո՛ւ, հեռո՛ւ սարալանջէն,
Տոսպայ լաներն գիս կը կանչեն,
«Եկուր—մըտնենք Ծովը վանայ,
Սըրտիդ կըբակն որ հովանայ»:

Ես Այգեստանիդ վարդերն եմ փողեր,
Անոնց բոյրը դեռ պահեր եմ անջինջ . . .
Կարօտիդ կըբակն երբեք չէ պողեր,
Երբեք անխրոով չէ բողեր իմ նինջն:

Ընկեր ենք եղեր ես ու քու Մըհեր,
Երկար ծըրագրեր՝ մէջն իր փարայրին,
Փախեր եմ յետոյ . . . բայց գայն հոն պահեր՝
Ու դեռ կը սպասեմ իր հըրաւէրին:


Քու կարօտը վառ՝ պիտ՝ մընայ նորէն,
Որ այսպէս սիրտըս օրրէ քընֆշօրէն . . .
Պիտի մընայ միշտ քու պատկերն ու յուշ,
Զերդ երագ անհաս, գերդ սիրատանջ փուշ:

Որքան անցնի ժամանակը, տասնամեակները դիզուին,
Նոյնիսկ եքէ յաւերժութեան խորութեան ծոցն ալ սուզուիմ . . .
Խոցուած, խաչուած դուն իմ օրրան, դուն իմ երագ առաջին,
Քու կարօտդ՝ հողին տակն իսկ պիտի իմ սիրտը կիզուի:

Թաղուիմ՝ երանի՝ վարագայ սարին,
Շիրմիս դէմ փըռուի փողափը վանայ,
Քունըս օրօրեն հովերն անտառին,
Սիփանը հեռուն հըսկումի կենայ:

Ու երբ, հողին տակ, սէրըս ծովանայ,
Ելլեմ ու սըփոեմ վրան փող՝փին վանայ՝
Զերդ շողֆն արևուն, մինչև Հայոց Զոր,
Ու մինչև *պէլէք* սարերն Ոստանայ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՍԱՂԻՄԱԿԱՆ ԱՆՑՈՒԿԱՐՁԵՐ

(1907 — 1926)

1907 Մայիս 2ին Դաւիթ Վրդ. Տէրաէրեան կ'ընտրուի Լուսարարացեալ Ս. Յակոբեանց Վանքին. — Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, Գ. Հատոր, 1927, Երուսաղէմ, էջ 5272-3:

1907 Յուլիս 15ին Ս. Յակոբեանց Միարանական Ընդհանուր Ժողովին կողմէ կը կատարուի ընտրութիւնը նոր Տնօրէն Ժողովին վեց անդամներուն, որոնք են,

- Մեսրոպ Վրդ. Նշանեան
- Հմայեակ Վրդ. Երէցեան
- Գրիգորիս Վրդ. Պոյաճեան
- Վահան Վրդ. Քէշիշեան
- Սարգիս Վրդ. Աճէմեան, և
- Մովսէս Վրդ. Ոսկերիշեան. — Ազգպ. Գ. էջ 5278:

1907 Սեպտեմբեր 3ին Ս. Յակոբեանց Ձեռագրաց Մատենադարանի Տեսուչ Մեսրոպ Վրդ. Նշանեան կը կազմէ Ս. Եկեղեցւոյ Աւանդատունը պահուած դրեանց Յուցակը, թիւ 2556/1 — 2669/114. — Ձեռագիր, էջ 1-15:

1907 Սեպտ. 10ին Մեսրոպ Վրդ. Տէր Մովսիսեան Ս. Յակոբեանց Ձեռագրաց Մատենադարանին մէջ իր աշխատութիւնները աւարտելով կը մեկնի Երուսաղէմէն. — Տոմար Արձանագրութեան, էջ 9 (Ձեռագիր):

1907 Հոկտեմբեր 29/11 Նոյեմբերին Ս. Էջմիածնի մէջ կը վարձանի Մկրտիչ Կթղ. Խրիմեան. — Մաղաքիա Արք. Օրմանեան, Խոհի և Խօսի, 1929, Երուսաղէմ, էջ 435: Ազգպ. Գ. էջ 5331:

1907 Նոյեմբեր 26-29ին Ս. Յակոբեանց Միարանական Ընդհ. Ժողովը կը վաւերացնէ վերաքննելու Կանոնադիրը և կը յանձնէ Կ. Պոյսէն եկած պատուիրակներուն որ դայն ներկայացնեն Կեդրոնի Ազգ. Վարչութեան. — Ազգպ. Գ. էջ 5289-5290:

1907 Դեկտեմբերին Ս. Յակոբեանց Վանքի Թարգմանի պաշտօնին կը կոչուի Սիմէոն Վրդ. Թեւեան. — Ազգպ. Գ. էջ 5449:

1908 Մայիս 7ին Վահրամ Եպս. Մանկունի կը վերադառնայ Կ. Պոլիս, լրացուցած ըլլալով Երուսաղէմի Պատուիրակութեան իր պաշտօնը. — Ազգպ. Գ. էջ 5291:

1908 Յուլիս 10/23, Հոշակունի Օսմանեան Սահմանադրութեան. — Ազգպ. Գ. էջ Մի: Խոհի և Խօսի, էջ 19:

1908 Յուլիս 16/29. Մաղաքիս Արք. Օրմանեան կը բռնադատուի հրա-
ժարիլ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան պաշտօնէն.— Ազգայ. Գ. էջ 5384,
ՄԻ :

1908 Հոկտեմբեր 22/4 Նոյեմբերին Մատթէոս Արք. Իզմիրլեան դարձ-
եալ կ'ընտրուի պատրիարք Թուրքիոյ Հայոց, և այդ հանդամանքով կը պաշ-
տօնադրէ մինչև 1909, Փետրուար 10.— Խոհք և Խօսք, էջ 289: Ազգայ. Գ. էջ
5407: Մկրտիչ Եսս. Աղաւնունի, Միաբանք և Այցելուք Հայ Երուսաղէմի,
1929, Երուսաղէմ, էջ 251: Թորդոմ Արք. Գուշակեան, Եղիշէ Պար. Դուրեան,
1932, Երուսաղէմ, էջ 239:

1908 Նոյեմբեր 24ին Երուսաղէմի մէջ կը կազմուի նոր Տնօրէն Ժողով
մը, որուն անդամները կ'ըլլան,

- Եղիս Վրդ. Յովհաննէսեան
- Գարեգին Վրդ. Սաքայեան
- Սամուէլ Վրդ. Կիրակոսեան
- Յովսէփ Վրդ. Սողոմոնեան
- Եսայի Վրդ. Կարապետեան
- Կարապետ Վրդ. Տէր Կարապետեան, և
- Յարութիւն Վրդ. Պարոնեան.— Ազգայ. Գ. էջ 5459-60:

1909 Յունուար 23ին Յոպպէ կը հասնին Երուսաղէմի չորրորդ Պատ-
ուիրակութեան անդամները, Յակոբ Աշոտ Եսս. Փափազեան, Գէորգ Ֆիքրի
Աճէմեան, և Հայկազուն Պէկեան.— Ազգայ. Գ. էջ 5463-4:

1909 Ապրիլ 14/27ին սուլթան Ապտուլհամիտ Բ. դահէն վար կ'առնուի
և նոյն օրը պաշտօնապէս դահ կը բարձրանայ իր եղբայրը Մէհմէտ Ռէշատ.—
Ազգայ. Գ. էջ 5425:

1909 Մայիս 22/4 Յունիսին Եղիշէ Արք. Դուրեան կ'ընտրուի պատ-
րիարք Թուրքիոյ Հայոց.— Խոհք և Խօսք, էջ 356:

1909 Յուլիս 17ին Ս. Յակոբեանց Աթոռին Տեղապահ կ'ընտրուի Դան-
իէլ Ծ. Վրդ. Յակոբեան, մինչդեռ ողջ էր Յարութիւն Պար. Վեհապետեան, և
յաջորդ տարին կը ստանայ եպիսկոպոսական օծում և արքութեան տիտղոս:
Տեղապահական պաշտօնին վրայ կը մնայ մինչև 1913.— Միաբանք և Այցելուք,
էջ 105: Խոհք և Խօսք, էջ 313, 314, 323: Ազգայ. Գ. էջ 5496: Միոն, 1933, էջ
357:

1909 Սեպտեմբեր 13/26ին Մատթէոս Արք. Իզմիրլեան կ'օծուի կաթո-
ղիկոս տմենայն Հայոց.— Ազգայ. Գ. էջ 5492: Խոհք և Խօսք, էջ 357:

1909 Դեկտեմբեր 14ին Յոպպէ կը հասնին Երուսաղէմի հինգերորդ
Պատուիրակութեան անդամները, Դանիէլ Ծ. Վրդ. Յակոբեան, իբրև Տեղա-
պահ, և Պարզև Փափազեան.— Ազգայ. Գ. էջ 5506:

1910 Յունուար 30ին Տեղապահ Դանիէլ Ծ. Վրդ. Յակոբեան հանդի-
սաւոր արարողութեամբ կը մտնէ Ս. Յակոբ և կը ձեռնարկէ իր պաշտօնին:
Յակոբեանի ստիպողական զործերուն կարգին կը յիշուի նոր Տնօրէն Ժողովի
մը կազմութիւնը հետեւեալ անդամներով.

- Դանիէլ Վրդ. Տէրտէրեան
- Արիստակէս Վրդ. Սաշատուրեան
- Գրիգորիս Վրդ. Պոյաճեան
- Պօղոս Վրդ. Շահնազարեան
- Սերովբէ Վրդ. Սամուէլեան, և
- Գէորգ Վրդ. Յովհաննէսեան.— Ազգայ. Գ. էջ 5512, 5514:

1910 Ապրիլ 20ին Երուսաղէմ կը հասնի Տրդատ Եսս. Պալեան իբրև

փոխանորդ՝ Տեղապահ Դանիել Մ. Վրդ. Յակոբեանի, որ էջմիածին պիտի մեկնէր հպիսկոպոստանալու համար. — Ազգայ. Գ. էջ 5520:

1910 Հոկտեմբեր 4/17ին կը վախճանի Երուսաղէմի Հայոց Պատրիարքը՝ Յարութիւն Արք. Վեհապետեան. — Միաբանք և Այցելութ, էջ 341: Խոնք և Խօսք, էջ 437: Ազգայ. Գ. էջ 5521: Տ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, թրգմ. Մեսրոպ Եպս. Նշանեան, 1931, Երուսաղէմ, էջ 1268:

1910 Դեկտեմբեր 11/24ին կը վախճանի Մատթէոս Կթղ. Իզմիրլեան. — Խոնք և Խօսք, էջ 357, 437-438:

1910—1913, Եղիշէ Եպս. Զիլինկիրեան, «Առանց պաշտօնական հանգամանաց Ս. Աթոսյ ներկայացուցիչ առ կաթոլիկութիւնն և առ այլ սղղոս». — Եղիշէ Եպս. Զիլինկիրեան, Յիշատակներ Բաղէշի Առաջնորդութեան, 1925, էջ 80: — Կարծէ աւելցնել նաև որ այդ շրջանին Եղիշէ Եպս. ունէր Դարպասնեակայի պաշտօն (1910—1914), և աստեանպէս էր Միաբանական Ընդհ. Ժողովին (1910—1916). — Միաբանք և Այցելութ, էջ 126:

1911 Փետրուար 8ին Երուսաղէմի մէջ կը վախճանի Երևանցի Մեսրոպ Արքեպս. Սմբատեան, որ ուխտի եկած էր Տէրուշահան Սրբափայտեան. — Միաբանք և Այցելութ, էջ 279: Պատմ. Երուսաղէմի, էջ 1290:

1911ին Դպրոցաց Տեսուչ կը կարգուի Մեսրոպ Վրդ. Նշանեան. — Միաբանք և Այցելութ, էջ 280-281:

1911—1912, Ս. Աթոռի Տեղապահի փոխանորդութիւնը կը վարէ Գրիգորիս Վրդ. Պոյաճեան. — Միաբանք և Այցելութ, էջ 101:

1912 Յուլիս 1/14ին Գէորգ Ե. Սուրէնեան, Տփղիսեցի, կ'օժուի կաթողիկոս ամենայն Հայոց. — Խոնք և Խօսք, էջ 360:

1912 Նոյեմբեր 11ին Կ. Պոլսոյ մէջ կը վախճանի Գէորգ Եպս. Երէցեան. — Ազգայ. Գ. էջ 5276-7: Միաբանք, էջ 64:

1912 Դեկտեմբեր 2/15ին Յովհաննէս Եպս. Արչարունի կ'ընտրուի պատրիարք Թուրքիոյ Հայոց. — Ազգայ. Գ. էջ ՄԻ:

1913ին Տպարանի Տեսուչ կը կարգուի Մեսրոպ Վրդ. Նշանեան. — Միաբանք, էջ 281: Սիոն, 1933, էջ 370:

1913 Օգոստոս 30/12 Սեպտեմբերին Թուրքիոյ Հայոց Պատրիարք կ'ընտրուի Զաւէն Եպս. Տէր Եղիայեան. — Խոնք և Խօսք, էջ 443: Միաբանք, էջ 140:

1913 Դեկտեմբեր 7/20ին Կ. Պոլսոյ Աղղ. Ընդհ. Ժողովին կողմէ շապով կը հաստատուի նոր Կանոնադիր մը Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան համար. — Խոնք և Խօսք, էջ 315:

1914 Յունուար 26/8 Փետրուարին Կ. Պոլսոյ մէջ կը կնքուի Թուրքի Ռուս Համաձայնագիրը՝ Հայկական բարենորոգումներու վերաբերեալ. — Djemal Pasha, Memories of a Turkish statesman, 1913-1919, էջ 272:

1914 Փետրուար 14/27ի կոնգակով Գէորգ Ե. կաթողիկոսը կը հրամայէ անդորձագիր թողուլ՝ Երուսաղէմի Աթոռին պարագայութեան առէն Կ. Պոլսոյ մէջ կազմուած նոր Կանոնադիրը իբրև սպօրիներ. — Խոնք և Խօսք, էջ 316:

1914 Մայիս 1ին Սահակ Եթղ. Խապայեան Սիւրի մէջ հպիսկոպոս կը ձեռնադրէ Հաճընի առաջնորդ Պետրոս Սարաճեան վարդապետը, և իր անձնական բարտուղարը՝ Գիւս Վրդ. Միսիթարեանը. — Պատմ. Կրդ. Կիլիկիոյ, էջ 912:

1914 Մայիս 6/19ին Երուսաղէմ կը հասնի Մաղաքիա Արք. Օրմանեան, իբրև Լիպօր Պատուիրակի Պատուիրակ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի. — Ազգայ. Գ. էջ ՄԻ: Խոնք և Խօսք, էջ 2, 319: Սիոն, 1933, էջ 357:

- 1914 Մայիս 19/1 Յունիսին Օրմանեան կը սկսի դաստիարակութիւնները նկ ժառանգաւորաց Վարժարանի սաներուն.— Խոհք և Խօսք, էջ 322:
- 1914 Յուլիս 28ին կը սկսի Համաշխարհային առաջին պատերազմը — Hamerton, The Outline History of the World, էջ 730:
- 1914 Սեպտեմբեր 10ին Թուրքիա կը ջնջէ Գարիթիւլասիոնները:
- 1914 Նոյեմբեր 4ին Թուրքիա կը մտնէ Համաշխարհային առաջին պատերազմին մէջ.— Nelson's Dictionary of Dates, էջ 1248:
- 1914—1916, Ելեմտից Տեսուչ՝ Մատթէոս Վրդ. Գայրզեան.— Միաբանք, էջ 250: Խոհք և Խօսք, էջ 321, 326:
- 1915 Յունուար 9/22ին Օրմանեան կը ձեռնարկէ լրացնելու իր Ազգապատում աշխատութիւնը, որուն երկու Հատորները արդէն տպուած էին՝ Հասնելով մինչև 1808 թուականը.— Խոհք և Խօսք, էջ 428:
- 1915 Փետրուար 12/25ին Երուսաղէմի մէջ Օրմանեան կը դրէ իր Խոհք և Խօսքին առաջին Հատուածը.— Խոհք և Խօսք, էջ 1:
- 1915 Ապրիլ 7/20ին Թուրքերը կը յարձակին Վանի Հայերուն վրայ, որոնք քաջարար դէմ կը դնեն:
- 1915 Յուլիս 28ին կը սկսի Անթէպի Հայոց զանդուածային տարագրութիւնը.— Պատմ. Անթէպի Հայոց, Ա. Հատոր, 1953, Լոս Անճէլըս, էջ 36:
- 1915 տարւոյ ամառը Ս. Յակոբեանց Տպարանը կը փակուի Թուրք կառավարութեան Հրամանով.— Միան, 1933, էջ 358:
- 1915 Հոկտեմբեր 31/13 Նոյեմբերի դիւերը անակնկալօրէն Ս. Յակոբ կը ժամանէ Կիլիկիոյ կաթողիկոսը Սահակ Խաչատրեան իբրև տարագիր.— Խոհք և Խօսք, էջ 334: Պատմ. Կրդ. Կիլիկիոյ, էջ 924:
- 1916 Յունուարէն մինչև 1917 Յուլիս Սահակ Կթղ. Խաչատրեան կը լողարդի Ս. Յակոբեանց Ձեռագրաց Յուցակին երկրորդ խմբագրութեան վրայ՝ Համաձայն թիւերու կարգին (Տետր 1-17) — Հմմտ. Միան, 1952, էջ 252:
- 1916 Փետրուար 16ին Սահակ Կթղ. Խաչատրեան հետեւալ տողերը կ'արձանագրէ թիւ 11 Ոսկիփորիկի դատարկ մէկ էջին վրայ. «Դառնագոյն և աննախընթաց ժամանակի մէջ կ'ապրինք, Հայք մանաւանդ, որք իրենց տունէն, քաղաքէն և գիւղերէն քուած են Սուրբոյ անապատը, ինչպէս և մենք հանդերձ սակաւաթիւ միաբանութեամբ Սոյ Աթոռոյն քուած ենք ի Սր. Երուսաղէմ».— Յուցակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Ա. Հատոր, 1966, Երուսաղէմ, էջ 77:
- 1916 Մայիսի վերջերը ձէմալ փաշան, իր Երուսաղէմ այցելելուն առթիւ, մանաւոր տեսութեան մը համար իր մօտ կը հրաւիրէ Խաչատրեան Սահակ կաթողիկոսը և անոր կը յայտարարէ. «Ձենք ուզեր որ մեր թշնամիին հրապատակ եղող կաթողիկոս մը մեր տէրութեան սահմաններուն մէջ ապրող Հայերուն Հոգևոր Պետը ըլլայ».— Պատմ. Կրդ. Կիլիկիոյ, էջ 925:
- 1916 Թուականի ամառուան սկիզբը ձէմալ փաշա կ'այցելէ Պատրիարքարան և կ'ընդունուի իշխանապետի պատիւներով.— Եղիշէ Եպո. Չիլիկիբեան, Նկարագրութիւնք, Բ. տպ. 1927, էջ 15:
- 1916 Յուլիս 16ին Սահակ Կթղ. Խաչատրեան կը դրէ հետեւալ տողերը թիւ 333 ձեռագրին մէջ. «Յունիս 25ին իբր թէ օգափոխութեան դայինք ի Ռեմիէ և յուլիս 16ին վերադարձանք, որով զործոյս շարունակութիւնը ընդհատեցաւ».— Յուցակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Բ. Հատոր, 1967, էջ 211:
- 1916 Յուլիս 19ին Թուրք կառավարութիւնը կը հրատարակէ օրէնք մը, որով Հայոց Ազգային Սահմանադրութիւնը կը ջնջուի, Կ. Պոլսոյ և Երուսաղէմի Պատրիարքութիւնները կը միացուն իր իրիկիոյ կաթողիկոսութեան, և Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսը՝ Սահակ Բ. Խաչատրեան կը կոչուի Թուրքիոյ Հա-

յոց ընդհանուր կաթողիկոս-Պատրիարքութեան նորաստեղծ պաշտօնին.— Պատմ. կրթ. կիլիկիոյ, էջ 930, 933-947:

1916 Յուլիս 20ին Սահակ Կթղ. Սոոյ, թուրք կառավարութեան հրամանով կ'անուանուի կաթողիկոս-Պատրիարք Թուրքիոյ Հայոց, ակոսանիստ ունենալով Երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանքը.— Միաբանք, էջ 438: Պատմ. կրթ. կիլիկիոյ, էջ 928:

1916 Օգոստոս 6/19ին վերջ կը դադարէ Օրմանեանի վարչական պաշտօնը Երուսաղէմի մէջ, և Սահակ կաթողիկոս Պատրիարքարան փոխադրուելով կը ձեռնարկէ իր նոր պաշտօնին.— Խոհք և Խօսք, էջ 319: Պատմ. կրթ. կիլիկիոյ, էջ 928:

1916ին Ղևոնդ Վրդ. Մազսուտեան, Սահակ կաթողիկոսի փափաքին համաձայն, Դամասկոսէն դալով կը ստանձնէ Ս. Յակոբեանց վանքին Ելեմտից Տեսչի պաշտօնը.— Միաբանք, էջ 233: Պատմ. կրթ. կիլիկիոյ, էջ 929:

1916 Սեպտեմբեր 13ին Պոլիսէն Երուսաղէմ կը զրկուին Արմաշի Դպրեվանքի տասներեք սաներ և կը միանան Փառանգաւորաց Վարժարանին մէջ զբաւուրով միակ դասարանին.— Սիոն, 1933, էջ 357-8:

1916, Հոկտեմբեր 17. ծնունդ Հայկական Լէզէոնի, որ պիտի կոուէր կիլիկիոյ ազատագրումին համար:

1917 Ապրիլ 12/25ին կը դադարին Օրմանեանի ուսուցչական զբաղումները, երբոր Դպրանոցի աշակերտները նոր օրէնքներու պատճեամբ կը զինուորացուին ու կը պարտաւորուին մեկնել.— Խոհք և Խօսք, էջ 323:

1917 Նոյեմբեր 6/19ին Սահակ կաթողիկոս՝ Սինդակիան եկեղեցականներու և Մաղաբիա Արք. Օրմանեանի հետ միասին կը տարուի Դամասկոս: Մեկնելէ առաջ Վանքին կառավարութիւնը կը յանձնէ Եռանձնեայ Մարմինի մը, բաղկացած Լուսարարապետէն (Դաւիթ Ծ. Վրդ. Տէրաշէրեան), իր փոխանորդէն (Գրիտ Եսոս. Միսիթարեան) ու Ելեմտից Տեսուչէն (Ղևոնդ Վրդ. Մազսուտեան).— Միաբանք, էջ 438, 244, 68: Ազգայ. Գ. էջ 171: Պատմ. կրթ. կիլիկիոյ, էջ 954-5: Սիոն, 1933, էջ 359:

1917 Նոյեմբեր 22/5 Դեկտեմբերին Օրմանեան, Դամասկոսի տարագրութեան մէջ, իրբև ժամանցի զբաղում կը սկսի շարունակել՝ վաղուց ընդհատուած իր Խոհք և Խօսքը.— Խոհք և Խօսք, էջ 13, 328:

1917 Դեկտեմբեր 9ին Բրիտանական զօրքերը կը զբաւեն Երուսաղէմը՝ հրամանատարութեամբ Զօրավար Ալէնպիի.— Nelson's Dictionary of Dates, էջ 1203:

1918 Մարտին, Եգիպտոսի Առաջնորդ Թորոս Եսոս. Գուշակեան մտաւոր հրաւերով կու դայ Երուսաղէմ, նախադահելու դատկական հանգչաններուն.— Միաբանք, էջ 159: Սիոն, 1939, էջ 77:

1918 Սեպտեմբեր 19ին տեղի կ'ունենայ Արարայի (Պաղեստին) յաղթական ճակատամարտը, ուր հերոսաբար կը նահատակուին քսաներեք հայ կամաւորներ, ի սէր Ազգին և Հայրենիքին.— Սուրիսիայի Տարիցոյց, 1924, Հալէպ, էջ 183:

1918 Հոկտեմբեր 30ին Թուրքիա անձնատուր կ'ըլլայ առանց պայմանի.— Nelson's Dictionary of Dates, էջ 1243:

1918 Նոյեմբեր 6/19ի գիշերը Գատր-Գիւղի մէջ (Կ. Պոլիս) կը վախճանի Մաղաբիա Արք. Օրմանեան, և երեք օր ետք կը թաղուի Շիշլիի գերեզմանոցը, Օրմանեանց յատուկ դամբարանին մէջ.— Ազգայ. Գ. էջ 171:

1918, Նոյեմբեր 11, Զինագագար: Վերջ Համաշխարհային Առաջին Պատերազմին.— Hammerton, էջ 768:

1918 Դեկտեմբեր 11ին անգլիացի սպաներ ոտք կը դնեն Այնթապ.— Ա. Կեսար, Այնթապի Գոյամարտը, 1945, էջ 34:

1919ին Քէօթահացի Դաւիթ Յովհաննէսեան Երուսաղէմի մէջ կը հիմնէ յարձապակիի գործարան մը.— Պատմ. Երուսաղէմի, էջ 1304:

1919 Մարտ 5ին Եղիշէ Եպոս. Զիլինկիրեան կը կարգուի նախագահ Ս. Աթոռոյ Վարչական Ժողովին, և կը մնայ նոյն պաշտօնին զրայ մինչև 1921: Այդ Ժողովին անդամներն էին,

Դաւիթ Ծ. Վրդ. Տէրաէրեան

Գրիգորիս Վրդ. Պոյաճեան

Մեսրոպ Վրդ. Նշանեան, և

Ղազարոս Պողոսեան.— Միաբանք, էջ 126-127: Եղիշէ

Եպոս. Զիլինկիրեան, Արձագանգ, Ա. 1925, էջ 134:

1919 Ապրիլին Սահակ Կթղ. Խապարեան կը վերադառնայ Կիլիկիա: Հոն ևս կը շարունակէ Ս. Յակոբեանց Ձեռագրաց Յուցակի երկրորդ խմբագրութեան աշխատանքը, նա յետի թիւ 18, 19 և 20 տետրակներուն, որոնք կը կրեն նոր տոմարով 1919 Մայիս 31, Յունիս 18, և Յուլիս 5 թուականները: Հետագային այդ Յուցակները նուիրած է Ս. Յակոբայ Վանքին.— Հմմտ. Պատմ. Կրդ. Կիլիկիոյ, էջ 961: Միաբանք, էջ 440:

1919 Օգոստոս 16ին, Կիրակի օր, Գարեգին Քհն. Պողարեան Հանդերձընանօք կը հասնի Այնթապ՝ վերադառնալով տարագրութենէ.— Օրագիր, Ն. Պողարեան, էջ 3, ձեռագիր:

1919 Հոկտեմբեր 29ին Ֆրանսացիք կը մտնեն Այնթապ, և Անգլիացիք կը հեռանան.— Պատմ. Անթապի Հայոց, Բ. Հատոր, էջ 12:

1920ին Երուսաղէմի Վանքին Կալուածոց Տեսուչ կը դառնայ Սիմէոն Վրդ. Թեյեան.— Միաբանք, էջ 473:

1920 Ապրիլ 1ին, հինգշաբթի օրը առաւօտուն կը սկսի Այնթապի կոտորէր: Հայերը կ'ամբասնեն մուտքերը իրենց թաղերուն, և կը դիմեն ինքնապաշտպանութեան.— Օրագիր, էջ 5:

1920 Մայիս 26ին, շոբեքշաբթի դիշերը 4000ի մօտ սրբեր և այրիներ կը մեկնին Այնթապէն. իրենց հետ էր Գրիգոր Գ. Պողարեան.— Օրագիր, էջ 5:

1920 Օգոստոս 10ին կը կնքուի Սեփրի դաշնագիրը.— Dictionary of Dates, էջ 1244:

1920 Սեպտեմբեր 24ին կը վերաբացուի Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը.— Եղիշէ Եպոս. Զիլինկիրեան, Յուլի և Պատմէմք, 1928, էջ 424-5ի միջև:

1921ին ութ հարիւր հայ որբեր և որբուհիներ Միջագետքէն կը փոխադրուին Երուսաղէմ: Մանչերը կը տեղաւորուին Ս. Յակոբեանց Վանքէն ներս երկու մեծ շէնքերու մէջ — Չամ Թաղ և Պատճէ Թաղ, «Արարատեան Որբանոց» — ուր կը մնան հինգ տարի.— Գուշակեան, էջ 302-3: Սուրիահայ Տարեցոյց, 1925, էջ 281:

1921 Փետրուար 8ին, Գշ. օր, Այնթապի թուրքերը ճերմակ դրօշակ կը պարգեն և Այնթապի պատերազմը վերջ կը դառնէ Հայոց յաջող և պատուաբեր ինքնապաշտպանութեամբ.— Օրագիր, էջ 11:

1921 Մայիս 1ին, Զատիկին, Վահան Քիւրքճեան կ'այցելէ Երուսաղէմ, իրրև Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի պատգամաւոր.— Միաբանք, էջ 495-6:

1921 Սեպտեմբեր 4ին, Կիրակի առաւօտ, կը վախճանի Դաւիթ Ծ. Վրդ. Չնքուշցի, որ իրր Լուսարարապետ կը պաշտօնավարէր 1907էն ի վեր.— Միաբանք, էջ 115-6:

1921 Սեպտեմբեր 5ին Եղիշէ Աբբ. Դուրեանն Կ. Պոլսոյ Ազգային Երեւ-
 փոխանական Ժողովին կողմէ կ'ընտրուի Պատրիարք Երուսաղէմի Առաքելական
 Ս. Աթոռին. — Միաբանք, էջ 124: Արձագանգ, Ա. էջ 290: Գոյշակեան, էջ 278:

1921 Հոկտեմբեր 7/20ին, նորընտիր Պատրիարքը՝ Եղիշէ Աբբ. Դուր-
 եան, Ս. Թորոսի Մատենադարանին կը յանձնէ 85 ձեռագրեր, զատելով Պատ-
 րիարքարանի զբերուն մէջէն. — Տոմար Արձանագրութեան, էջ 23-27:

1921 Նոյեմբեր 7ին տեղի կ'ունենայ զահակալութիւնը Դուրեան Եղիշէ
 Պատրիարքի, որուն ընտրութիւնը հաստատուած էր Ազգային ճորճ Ե. Թաղա-
 ւորին կողմէ. — Գոյշակեան, էջ 279:

1921 Դեկտեմբեր 1/14ին Դուրեան Եղիշէ Պատրիարքը Ձեռագրաց Մա-
 տենադարանին կը յանձնէ 62 ձեռագրեր. — Տոմար Արձանագրութեան, էջ 27-9:

1921 Դեկտեմբեր 25ին Ֆրանսացիք կը հեռանան Այնթապէն և թրքա-
 կան զորքերը կը մտնեն քաղաք. — Այնթապի Գոյնամարտը, էջ 173:

1922ին Երուսաղէմի մէջ կը վախճանի Ղևոնդ Վրդ. Մազուտեան —
 Միաբանք, էջ 233:

1922 Մայիսին Լուսարարացի տղայ Կ'ընտրուի Մեքրոպ Վրդ. Նշանեան. —
 Միաբանք, էջ 281:

1922 Յուլիս 24ին Պաղեստինի Հողատարութիւնը կը յանձնուի Մեծն
 Բրիտանիոյ՝ Ազգերու Ժողովին կողմէ. — Dictionary of Dates, էջ 1219:

1922 Օգոստոս 2ին Այնթապցի Նորայր Գ. Պողարեան իբրև ուսանող
 կը մտնէ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը. — Օրագիր, էջ 21:

1922 Նոյեմբեր 1ին սուլթան Րէշատ զահընկէց կ'ըլլայ. — Dictionary
 of Dates, էջ 1244:

1922 Դեկտեմբեր 5ին Գարեգին Քհն. Պողարեան Հալէպ կը փոխադրէ
 Այնթապի Ս. Աստուածածին եկեղեցիին ձեռագիր մատենաները. — Նամակա-
 նի, Ն. Պողարեան, էջ 3-5, ձեռագիր:

1922 Սեպտեմբեր 27ին յանկարծամահ կը վախճանի Դանիէլ Աբբ. Յա-
 կոբեան. — Օրագիր, էջ 22:

1922 Նոյեմբեր 29ին Բարդէն Եպս. Կիւլէսէրեան կը ժամանէ Երուսա-
 ղէմ. — Օրագիր, էջ 22:

1923ին Կիւրեղ Վրդ. Իսրայէլեան կը նշանակուի Տեոուշ Ս. Յակոբ-
 եանց Ձեռագրաց Մատենադարանին:

1923ին Կ. Պոլսեցի Կարապետ Նուրեան կ'անուանուի Դիւանապետ Ե-
 րուսաղէմի Հայոց Պատրիարքարանին. — Միաբանք, էջ 524:

1923 Մարտ 16ին Բարդէն Եպս. Կիւլէսէրեան կը վերադառնայ Սիւր-
 իայէն, ուր դացած էր մօտ երեք ամիս առաջ. — Օրագիր, էջ 23:

1923 Յունիս 15ին (Ն. Տ.) Դուրեան Պատրիարքը, ձեռամբ Մեքրոպ
 Մ. Վրդ. Նշանեանի, Ձեռագրաց Մատենադարանին կը յանձնէ 74 ձեռագրեր. —
 Տոմար Արձանագրութեան, էջ 30-36:

1923 Յուլիս 24ին կը ստորագրուի Լօզանի Դաշնագիրը. — Dictionary
 of Dates, էջ 1244: Սուրիահայ Տարեցոյց, 1924, էջ 267, 268:

1923 Օգոստոս 1ին, Այնթապի Ս. Աստուածածին եկեղեցիէն բերուած
 47 ձեռագրերն էր ի պահ և ի յիշատակ կը դրուին Ձեռագրաց Գրադարանին մէջ,
 ձեռամբ Բարդէն Եպս. Կիւլէսէրեանի. — Տոմար Արձանագրութեան, էջ 37-46:

1923 Հոկտեմբեր 29ին Թուրքիա կը դառնայ Հանրապետութիւն. մայ-
 րաքաղաք՝ Անգարա. — Dictionary of Dates, էջ 1244:

1923 Նոյեմբեր 6 թուակիր կոնդակով Գէորգ Ե. Կաթողիկոսը կը հրա-
 հանդէ գործածութիւնը Նոր Տոմարի:

1924 Հոկտեմբեր 22ին մեծ սրբերէն 159 հոգի Երուսաղէմէն կը մեկնին զէպի Հայաստան. — Օրագիր, էջ 27:

1924 Նոյեմբեր 11ին նորաստակ Մեսրոպ Նշանեան և Մատթէոս Գայրջեան Լպիսկոպարաները Ս. Էջմիածնէն գալով կը դիմաւորուին պատշաճ Հանդիսաւորութեամբ. — Օրագիր, էջ 27:

1924 Նոյեմբեր 19ին Երուսաղէմ կը ժամանէ Բարզէն Եպս. Կիւլէսէրեան. — Օրագիր, էջ 28:

1925ին Ս. Յակոբեանց Վանքին մէջ կը պատասպարուէին աւելի քան հարիւր հայ զաղթականներ և տարագիրներ. — Սուրիահայ Տարեցոյց, 1925, էջ 235:

1925 Ապրիլ 1ին Ոսնալուսայի արարողութեան ընթացքին կ'երդէ Արմենակ Շահմուրատեան. — Օրագիր, էջ 30:

1925 Ապրիլ 26ին Արմենակ Շահմուրատեան երգահանդէս մը կուտայ Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ. — Օրագիր, էջ 31:

1925 Մայիսին կը վերաբացուի Ս. Յակոբեանց Տպարանը. — Սինոն, 1933, էջ 359:

1925 Հոկտեմբեր 4ին, Կիրակի օր, նորայր Գ. Պողարեան կը ձեռնդրուի կուսակրօն սարկաւազ. — Օրագիր, էջ 32:

1925 Հոկտեմբեր 15ին Բարզէն Եպս. Կիւլէսէրեան կը վերադառնայ Երուսաղէմ, շարունակելու իր դասախօսութիւնները Ս. Աթոռոյ Ընծալարանին մէջ, յատկապէս նորակազմ Կիւլպէնկեան Դասարանին, որուն ծախքը ստանձնած էր Պատրիկ Կիւլպէնկեան հինգ տարուան շրջանի մը համար. — Հմմտ. Պատմ. Կրդ. Կիլիկիոյ, էջ 1028:

1925 Հոկտեմբեր 22. Ազգային-Եկեղեցական Ժողով զուգարելու յատուկ Կանոնադրութիւն կը հաստատուի Գէորգ Ե. Կաթողիկոսի կողմէ. — Սինոն, 1930, էջ 252-4:

1925 Հոկտեմբեր 25ին, Կիրակի օր, կը կատարուի Արարոյի 21 նահատակներուն ոսկորներուն թաղումը Ս. Փրկչի Գերեզմանատան մէջ: Դամբանական մը կը խօսի Եղիշէ Պար. Դուրեան. — Օրագիր, էջ 33:

1925 տարւոյ վերջերը Տնօրէն Ժողովը ունէր հետեւեալ կազմը.
Եղիշէ Պար. Դուրեան, Նախագահ
Մեսրոպ Եպս. Նշանեան, Ատենապետ
Մկրտիչ Եպս. Աղանուներ
Մատթէոս Եպս. Գայրջեան
Սիմէոն Մ. Վրդ. Թեյեան
Յարութիւն Վրդ. Պարոնեան
Համադասպ Վրդ. Ղազարեան, Ատենաղպիր
Մուշեղ Վրդ. Հայրապետեան. — Տես. Օրացոյց, 1926, Երուսաղէմ, էջ 139-140:

1926 Փետրուար 20ին, Կիրակի օր, Կարկուռի Դատին շահուած ըլլալուն ուրախ առիթով, Վանքի սեզանատան մէջ պաշտօնական ընթրիք մը կը տրուի ամբողջ Միաբանութեան, և կը խօսուին խանդավառ ճառեր. — Օրագիր, էջ 35:

1926 Հոկտեմբեր 3ին, Կիրակի օր, Կիւլպէնկեան Դասարանի ուսանողները կը ձեռնադրուին սարկաւազ. — Օրագիր, էջ 37:

1926 Հոկտեմբեր 12ին Մարտէլի մէջ կը վախճանի Սարգիս Եպս. Աճէմեան. — Միաբան, էջ 451: Տարեկ Տարեցոյց, 1927, Հայէպ, էջ 304-5:

ԾՈՎԱԿԱՆ

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

Յ Ո Ւ Յ Ա Կ Ձ Ե Ռ Ա Գ Ր Ա Յ

ՀԱՐԹՖԸՐՏԻ ԱՍՏՈՒԱԹԱԲԱՆԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

«Այլ գոամիթն. գինով եփէ, և յաչքն կաթեցոյ: Աչքն որ շրջկոտ լինի և կոպերն ուռննայ. առ աղեկ եսան մի, և դանկով քերէ գեսան. և առ դքերունքն պահէ. և ապայ առ անծակ գղթոր մի և լոսէ և մաղէ, և աղջկան մօր կաթեամբ չաղէ գերկուան և աչքն դիր. ապայ գկաթն ի գէր կնկան առ: Աչքն որ ուռննայ գչուչման գինով եփէ և ի վերայ դիր: Այլ աչքն որ վատ տեսնու առ զսպիտակ խոռոզի լեղին, և աղջկան մաւր կաթեամբ միաչափ արայ, և յիրար խառնէ և աչքն դիր:

«Աչքն որ մաղ կայ, գտեղն կաշուին հան. և ի տեղն գորտուն արին կաթեցոյ, այլ չի բուսանի: Աչքն որ արեղակն չկարէ հայել, գմորենուն տակին կեղևն եփէ. և չորացոյ և լաւ մանր և աչքն դիր: Աչքն որ սպիտակ լինի. պատեղվոր կնոջ խիժ կաթեցոյ աչքն. Գ(երեք) աւր: Ապայ թէ սպիտակն հին է գմարդուն սկաւառակն այրէ՝ գքկուրդն և դհում շաքարն. ողկէ միաչափ յիրար խառնէ և աչքն դիր: Այլ գմարդուն ակոսն ողկէ. և հում շաքարով յաչքն դիր, գչիքըն տանի: Աչքն որ ցաւի, զպաղ շաքարն կաթեամբ աչքն դիր:

«Աչքըն որ ուռննայ. քրքում և հաւկրթի դեղնուց յիրար խառնէ և դիր:

«Այլ գոսկի դեղ չիրն դատարկ աչքո անցոյ: Իսկելոյ վատ է:

«Այլ գանծակ մարգարիտն ողկէ. և աչքն ձգէ նոյնպէս առնէ:

«Աչքն որ հաւկուր լինի, առ վկաքվոտիկ բանջարն, և օձու խորի միաչափ, չորացոյ և լոսէ. և հաւկթի դեղնուցով աչքն դիր:

«Աչքն որ սպիտակ լինի, ողկէ և ձգէ որ նոսրցնէ: Եւ ապայ առ գկաքվոտիկ բանջարն և գսե օձու խորին. և դքարթաւչի ծիրտն. որպէս ծարուր արայ և ձգէ. և յետոյ երբ ողջանայ, տուղ չաման ծեծէ մանր. և ի հաւկթի դեղնուցն ած. և խորվէ. և տաք յաչից վերայ դիր՝ ապայ այս դեղբանքս ի Ռ (1000) ընտրած է»:

Էջ 51ր. Երուսաղէմի Յկարագրութեան շարունակութիւնը: Անխնամ և տգէտ կազմողը խառնիխուռն կազմած ըլլալով, քերքերը ետ առաջ եղած են:

Էջ 60ր. «Տաղ Առաքելի ասացեալ Ատուածածնի» ԱԲԳեան տաղ: Ասոր կը յաջորդէ «Տաղ Նարեկացոյ է ասացեալ»: Էջ 61ր. վերև կայ յստակ չտրպուած ուրանկիւն կնիք մը՝ «Ք(րիստոսի) Մ(ատայ) Կիրակոս»: Ասկէ վերջ՝ տաղեր: Յետոյ վարդի և սոխակի տաղ մը, սկիզբը պակաս.

Մաղկանցն ամենայնի պարծանք ցուցանեմ:

Վարդն ի պլպուլն ասաց Ես դիմակաց չեմ,
ի ծագմանէ լուսոյն զողալով սարսեմ.
Վախեմ թէ զարեղակն առ իս տեսանեմ,
Չտերևս իմ գեղեցիկ յիսնէ թօթափէ:

Պլպուլն ի վարդն ասաց թէ գովելի էս,
 Զի դամենայն ծաղկանց դու ցանկայի էս,
 Տեսով քո արբեցայ զերդ զգինով էս,
 Արարիչն աստուած կանանչ պահէ քեզ:

Վարդն ի պլպուլն ասաց զեղեցկածայն էս,
 Որ դամենայն մարդիք դու ուրախ ասնեսս.
 Ազգի ազգի գունով դու եղանակես,
 Թոչնոցն ամենայնի աչկ պարձանաց էս:

Ես Առաքել մեղօք լցեալ յաշխարհի.
 Որ զպլպուլն ի հետ վարդին սակաւ գովեցի,
 Ի Գարբիէլ հրեշտակն յօրինակեցի,
 Եւ ի կոյս Մարիամ ծնաւոյ Յիսուսի:

Զձեզ աղաչեմք եղբարք տաղիս հանդիպողք,
 Եղանակէք սիրով ձայնիւ բերկրայի,
 Յիշէք զձեզ և առէք Աստուած սղորմի,
 Եւ դուք արժան լինիք տեսն Քրիստոսի:

Ասկէ վերջ՝ «Տաղ դարբայի»: Էջ 69ր. «Տաղ սուրբ Երուսաղէմայ»,
 Յակոբ Բախանայի ասացեալ է «Հաղար ութսուն և հինգ թիւրն ի յրժան», այսինքն 1636ին գրուած:

Էջ 72ր. դարձեալ Երուսաղէմի նկարագրութեան մաս:

Թիւ 12 (Հաւաքման A 195/45)

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ծաւալ՝ 12×17 սմ.: Գրչութիւն՝ միասիւն, մանր նտարդիւր, 31 տող:
 Նիւք՝ թուղթ: Կազմ՝ կաշկպատ տախտակ, զրոշմադարձ, փնտտուած: Հանգամանք՝ խոնաւութենէ թուղթը փնտտուած ստորին մասերը: Ծաղկում՝ աննրշան: Պահպանակ՝ մաղաղաթ երկաթագիր թերթի մէկ շորտորդը: Կտոր մը բուկիզրը և հատ մըն ալ վերջը: Կը կարդայցուի. «Եւ այս կանոն կատարի Սաղմոս ճՐ Կցուրդ փոխանակ սիրոյ մասն»: Կարմրաւ. «Աւետարան ըստ Յովհաննու». Յովհաննու նոր գրչէ մը ջնջուած և վրան «Ղուկաս» գրուած: Չեռագրին վերակազմութեան առեմն սկիզբը աւելցուած է երկու քերք, ետևը՝ բազմաքիւ: Սկիզբի բուրքերէն 1ա-ին վրայ նոտրցիւր կայ սա ցանկը, ըստ երևոյթի նանանական գրադարանի մը. «Այս է իմ Աբրահամուս գրեանց թիւր: Ոսկան աստուածաշունչ մը: Նարեկացի: Աբաբնոց Լուծմունքս: Բ(երկու) տրամտարանութեան գիրք: Ա(մէկ) Պատմութիւն մէկ զրշայ: Գրշայ սահմանաց գիրք: Բ(երկու) Սիմէոնի քերականութեան գիրք մէկ պատմայ (տպագիր) մէկ զրշայ: Վէմ Հաւատոյ գիրք: Ճիւ Տօնացոյց: Գ(երեք) Շարական: Բ(երկու) պատմայ մէկ զր.կայ: Գ(երեք) էլ Սաղմոս: Առաքինութեանց գիրք: Ազգիւր Բարի գիրք: Հայելի Վարուց մը: Բ(երկու) Եւազր: Յիսուս Որդի գիրք մը: Առաքել պատմայ գիրք: Բ(երկու) Պղնձէ Բաղաքի պատմութեան գիրք»:

Բուն ձեռագիրը կը սկսի «Յաղագս Քերականութեան համառատ լուծմունք ի Տէր Առաքել Սիւնեաց կախկոպոսէ. ի մեկնութիւն քերականութեան: Պէս պէս յատկութեամբ պարզեալ վասն զիւրաւ հասկանալոյ զխորութիւն բա-

նից քերականին Յաղազս նախերգան ի քերականութեանց Առաջին որ ասէ Յաղազս Քերականութեան» :

Էջ 123ա․ գրչուքիւնը կը փոխուի․ «Այս ինչ է ընարան Պորփիրի» :

Էջ 127ա․ կարմրաւ․ «Նորին Գրիգորի Աշակերտի Համառօտ տեսութիւն ի զիրս Պորփիրի» : Էջ 147բ․ որմէ վերջ չորս քերք նորոգողի գրչէ : Յաւախ վերի անկիւնը ցեցակեր :

Էջ 184ա․ «Եռամեծին Յովհաննու Հայոց փիլիսոփայի և վարդապետի Հաւաքումն Համառօտ վերլուծութեան ստորոգութեանց Արիստոտելի ի Գրիգորէ աշակերտէ» :

Էջ 249ա․ «Նորին Յօհաննու Որոտնեցոյ Համառօտ լուծմունք Պէրիարմէնի գրոցն ի Գրիգորէ աշակերտէ» :

Էջ 312բ․ «Նորին Գրիգորէ աշակերտի Յովհաննու մեծի Համառօտ լուծումն Առաքինութեանց Արիստոտելի» մինչև ձեռագրին վերջը, քերք 330, սակայն վերջին ինը քերքը նորոգողէն գրուած : Թերք 330էն վերջ պարապ :

Թիւ 13 (Հաւաքման A 195/23)
ՊԱՏ. ԹԻՄՈՒՐԼԷՆԿԻ ՄԵՇՈՓԵՑՈՅ

Ծաւալ՝ 12×15 սմ․ : Գրչուքիւն՝ միասին, նստրգիր, 24 տող : Նիւթ՝ թուղթ : Կազմ՝ կաշեկապ տախտակ զբոշմադարդ : Ատառուած բամպակեայ տպածոյ լաթով : Ծաղկում՝ աննշան : Հանգամանք՝ լաւ ու կատարեալ : Ներքին կողքին մատիտով, անդլերէն․ «Հայերէն Պատմութիւն Թիմուրլէնկի» :

Էջ 1ա․ կարմրաւ․ «Պատմութիւն Համառօտարար վասն յարեկեան թագաւորացն պղծոյն և չար դադանին թամուր Լանկ անուն զոր աւերեալ զաշխարհս արեկելից մինչև ի ծովն Ոկիանոս, և այլոցն արարեալ քաջ վարժապետին թովմայ վարդապետի» : Վերջը էջ 61բ․ գրչէն․ «Մանաւանդ և ինձ տառապեալ անձիս Յովանէսի․ բանասերի, և սակաւ գծադրաւորի զպատմութեան քաջ հետեւորդէս մերուս թումա մեծ վարժապետի Կաֆացոս․ Չոր սկսեալ ի յարեկեան թագաւորացն և ի չար գահէն թամուրայ, մինչ ի կէտ կոչմանն զբովեցոյց և եհաս առ մեզ յետնինքս զոր ընթերցեալ տեսաք ի փափաքմամբն տիրացաք ի ՌԼԹ(1590) թվականին» :

Էջ 62բ․ «Այս են չուք որոցցն Խարակի» : Յետոյ․ «Վասն միարանութեան Հայոց, և կաթուղիկոս ձեռնադրութեան» (Հրատարակուած Արարատի մէջ, էջմիածին, «Նոր նիւթեր», Գարեգին Արքեպս. Յովսէփեանէ) : Ասոր կը յաջորդէ «Յաղագս էջմիածնի Արհնուքեան Ձեռնադրութեան» :

Էջ 75ա․ «Վասն աքսորման Տէր Կիրակոս կաթուղիկոսի» :

Էջ 81բ․ «Պատմութիւն մեծի բարունապետին թումայի, զոր արարեալ Կիրակոս բանասէր վարդապետի» (Նոյնպէս հրատարակուած Գարեգին Արքեպս. Յովսէփեանէ 1914ին, Վաղարշապատ) :

Էջ 88ա․ կարն գրուքիւն մը որ կ'աւարտի երկրորդ էջին վրայ․ «Որքան են և ո՞րք զիրք սուրբք հին և նոր կտակարանք» : Ձեռագիրը կ'աւարտի :

Թիւ 14
ԱԻՆՏԱՐԱՆ

1222

Թերք՝ 282 : Ծաւալ՝ 16.5×25.5 սմ․ : Գրչուքիւն՝ հին բուրգգիր, երկ-

սին, շաղանակագոյն մելան հետզհետէ դունաթափ, 20 տող: Կազմ՝ կաշեկազմ արծաթազարդ: Նիւթ՝ թուղթ:

Էջ 1ա. սիրուն և ո՛չ հասարակ խորան և լուսանցազարդ սկիզբն Մատթէոսի: Թերթ 75թ վերանորոգողէ: Ստորին լուսանցքին. «Ո՛վ սուրբ եղբայրք որք հանդիպիք այս սուրբ աւետարանին կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մեղասքաւիչ ազաւթս ձեր զՍիմէոն քահանայ մանից, որ ստացաւ դաս յարդար ընչից իւրոց յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ամենայն ազգայտոհմից կենդանեաց և ննջեցելոցն: Ընդ նոսին և զիս զմեղաւք լրցեալ ոգիս զՄարգարէ, որ սակաւ մի աշխատեցաւ ի սայ ի համարքն դրել, և թուխթս որ սպակաս էր և կարեց ու գրեցի: Եւ աստուած ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս ողորմեսցի յարդար դատաստանին, և նմա փառք ամէն»:

Էջ 131բ. գրչէն. «Աւետեաց բաշխող քրիստոս առատասպարդե պարզեալ մեղասաէր անձին գրչի թողութիւն մեղաց և ստացողի սորա ամենայն մեղաւորաց զի կարող էս յամենայնի և քեզ ընդ հաւր և սուրբ հոգւոյն փառք յաւիտեանս ամէն ամէն»:

Էջ 281ա. գրչէն գլխաւոր յիշատակարանք. «Շնորհիւ տեսան սկսաւ և ողորմութեամբ նորին կատարեցի զյղձալիս յոքունց: Որով փրկեցան համարէն ծնունդ Աղամա, ազատեալք ի մեղաց: և զերծեալք ի խաւարէ կոտորատութեան զալստեամբ տեսան մեր Յիսուսի Քրիստոսի յաշխարհս: Որպէս ծանեաք զհայրն, և զսուրբ հոգին, լուսաւորեալ և նորոգեալ. և նորափետուր զարդարեալ, աւազանաւն մաքուր յորում որդեգրիմք երկնաւոր հաւրն առհաւատեալս առեալ պարզեւ զհոգին սուրբ, մարդապետութեամբ տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի: Արդ չորեք մտակեան անծայրածաւալ ծոմս յորեքեոքեան տիեզերս բոլոր սեռից. ենթակայացեալ բաղկացութեամբ ի մի. առ ողեալ արբուցանէ իւր զմի դրախտ: Վասն զի և զհեղեալ բանն ի ծոցոյ հաւր ամենայն արարածք անոյշութեամբ լցան. ըստ ճշգրիտ և անհաս պատմութեան, առնթեր մկայիս մերձ կացելոյ անկելոյ զլանջաւք տէրունական, տեղեկացեալ և հասուլեալ անհաս խորին խորհրդոց մեծին աստուծոյ, ծանուցանէ տիեզերաց զաստուածութիւնն որդւոյ, հանդերձ իրիւք ընկերիւք աստուածարանեալ Մաթէոս, Մարկոս, Ղուկաս, Յոհաննէս: Մմա բաղձացեալ միայնացեալ Աստուածատուր անուն յորջորջի, ի մխիթարութիւն հոգւոյ և մարմնոյ յար ընդ նմա խաւսակցելոյ, և յետ մահու յիշատակ իւր և ազգատոհմի իւրոյ: Արդ էս ողբալիս և հոգով մեռեալս անուն Գրիգոր կոչեցեալ փցուն մտաւք և գրչաւ ազաւթ զամենեսեան չլինել մեղադիր խոչորութեան գրոյս. զի թեպետ և ... բայց տառիս դառն. զի անաւրէնք յամենայն կողմանց զերեցին զաշխարհս Կիլիկիացոց. զի թաղաւոր ո՛չ գոյր, և իշխանն անհնազանդ իրերաց մինչ աստուած կամեցաւ և թագաւոր ետ և սակաւ մի խաղաղացաւ յայս դառն ամբս ևս անհանգիստ ի տեղիս տեղիս փոփոխելով աւարտեցի զգիրս յնախ արբինակէ, յանապատս Փոս կոչեցեալ ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս և այլ սքանչեւագործ սրբոց և ի մէջ ... որ եղբարց. և ընդ իր առաջնորդի որ զպետս մարմնականս անթերի պահեր և յորդորեր ի գիրս, և զայն որ զառաջի զգիրն և զմաղիկն զարդարեաց, և զամենեսեան որ աւանական են լեալ, և որ հակառակ լեալ են ինքն զիտէ զի խիստ ինձ հատոյց. և այն ի շարեն էր ամենայն որ առասն է ևս ուր ստացէ ամենեցան յանպակաս պարզեացն մասն բարեաց յիշողացս և յիշեցելեացդ առ հասարակ: Եւ նմա փառք յաւիտեանս, և յապառնին այժմ և միշտ

յամեն ամէն և ի թուականս ՈՀԱ. (1222), և կաթողիկոս Հայոց Կոստանդին, և թագաւոր Փիլիպպոս, յայսմ ամի հաստատեցան յաթոսս. Քրիստոս Աստուած ըստ կամաց իւրոց հաստատուն պահեցէ...» :

Հոս յիշուած Կոստանդին կաթողիկոսը Բարձրբերդցին է, որուն համար Գրիգոր գրիչ կը վկայէ որ «*յայսմ ամի (ՈՀԱ.—1222) հաստատեցան յաթոսս*», քէն Օրմանեան Կոստանդին Բարձրբերդցին 1221ին կաթողիկոսական արձու բարձրացած կը նկատէ: Հայոց ՈՀԱ կամ 671ը կը սկսի Յունուարի 25 1222ին: Գրիչը իրաւունք ունէր յիշատակագրելու որ «*անուրէնք յամենայն կողմանց զերեցին զաշխարհս Կիլիկեացոց. զի թագաւոր ո՛չ գոյր, և իշխանն անհնազանդ իրերաց մինչ աստուած կամեցաւ և թագաւոր ետ և սակաւ մի խաղաղացաւ*»: Արդարև Կիլիկիոյ արքայական գահը քափուր մնաց երկու տարի, որովհետև կարելի չեղաւ համաձայնիլ Հայ իշխանի մը վրայ: Զապէլ հագիւ եօթ տարեկան էր և բոլորովին անյարմար, որով որոշուեցաւ Անտիոքի դուքսին Փիլիպպոս կամ Ֆիլիպ որդին ամուսնացնել Զապէլի և զինք Կիլիկիոյ քագաւոր ընել: Փիլիպպոս շուտով գահագուրկ եղաւ և Կոստանդին ինքնամակալը իր Հերոս տղան ամուսնացուց Զապէլի:

Զեռագրին վերջը պահպանակ քուրք Ա. էջին, նոտրգիր. «*Ի վերջին յիշատակ է սուրբ աւետարանս Ընամատանին կնոջն Մառային, որ ետուր իւր հալալ ընջիցն ժե(15) Քլօրի և առօ այս սուրբ աւետարանս և երես յիշատակ իւր հոգոյն Յաղման ի դուռն սուրբ Յակոբին և սուրբ Պօղոսին ամէն ով ոք շունի իշխանութիւն ծախելոյ և զբօելոյ թէ որ անդրքինին նա մասն Յողայի առցեն և անձքն Կայենի: Գրեցի սուրբ տառս ձեռամբն Ընապատու հոգ և մտխիր Պօղոս երիցուն, ով ոք այս տառիս հանդիպիք ասացէք աստուած ողորմի Մառային հոգոյն և զրչիս Տէր Պօղոսին աստուած ողորմի ձեր անցեալ ննջեցելոցն և ձեր կենդանի հոգոյն ամեն: Գրեցաւ վերջին յիշատակս ի թվին ՌՃ (1651)»:*

* * *

Հաւաքման մէջ կայ նաև հայատառ քաղօթինակ լուսատիպ «Ինքիլաֆօ Մաքէռսն վիսի»:

Յ. ՔԻԻՐՏԵԱՆ

(Շար. 3 և վերջ)



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Բ. — Ի ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻՆ ՓՐԿԶԻՆ

Սրբոյն Թէոփիլեայ ի սուրբ և ի սուկալի ծնունդ Փրկչին, և վասն մոգուցն և աստեղն և փառք ի բարձանցն :

Ի մէջ տօնասիրաց քրիստոսագրեանոց զսուկալի և զանպատում ծննդենէն Քրիստոսի ճառել յարժարիմ : Եկայք այսօր պայծառասջիք ի տօնս Քրիստոսի, քրիստոսապէր ժողովուրդ, քանզի լոյս ծագեցաւ մեզ այսօր ազդի մարդկան հաւատացելոցն՝ յանպատեւլի մարմնաւորութիւն նորա : Մեծ է և ըսքանչելի խորհուրդս այս և զարժանալի մտաց յարժարումն, զի արարօղն երկնից և հաստատօղն՝ երկիր իջանէ, զոյացուցանօղն անմարմնոց և հրաշագործօղն՝ մարմնանայ և մարդ լինի. զոր երկինք տանել ոչ կարէ այսօր ի կուսէն տղայ լինի և ի նեղագոյն մտուր զնի : Չոր բաղձաչեայ քերորէքն և վեցթեան սերորէքն, հրակերպ զօրութիւնքն ի վերայ ուսոց իւրեանց տանել ոչ կարեն, ի վերայ գրկաց զուզնաբեայ տանի : Չոր թեւաքղեալքն յերեսաց աստուածութեան նորա ծածկեն զերեսս իւրեանց, այսօր տեսանելի լինի մարդկան երկրաւորաց : Նոր է սքանչելիսդ, ի խոր է խորհուրդդ. քանզի այսօր յերկրի նոր երկինք նորաձեւալ բանն Աստուած, զորովայն կուսին, և ի նմա տարարեալել հաճեցաւ, և զերկինս երկնաւորաց պատրաստեաց բնակարան :

Այսօր ի դէպ երկրի պանծալ և պարծիլ, և առ բարձրութիւն հաստատութեանն երկնից ասել. անբաւ խոնարհութիւնս, զհաւասարութիւն բարձրագունիդ ունիմ, երկիր էի և եղէ երկինք, տարա ի փոքր տեղւոջ զոր դուն տանել ոչ կարէիր, ստեղծեալն յինէն ծնաւ տղայ գգր և զիմ արարչին, և ծնունդ իմ ճեմեացի աստուածալայելչապէս ի վերայ հաստատութեան քո :

Այսօր այրն ճեմեալ պարծեսցի ընդդէմ եղեմայ յողանձաղկի, կարծր այնապատի ծաղկաբեր բողբոջօղ, զարդարեալ պայծառագոյն հանդոյն ծաղկազարդ ծառոց աստուածատնդոց քոց, զունապաճոյճ զանազան ոստովք հրաշագեղ. քանզի անդ պտղոյն զեղեցկութիւն զգեղապարոյր ստեղծուածն ի ըստեղծուածէն իզացոյց, զոր իզական բնութեանն զեղն վառեցաւ, և տենչանքն բորբոքեալ ի սրտին խնձակատեսակ փայտին, և ճաշակելով փարատէր տեսն, ուր և խորսխի անոյր բուծարանս, որով կոկորդն քաղցրանայ, և առժամեայ քաղցրացաւ տարփողին, յղացաւ զքաղցունս, թորեալ որովայնին, և ծնաւ անէճս և տրտմութիւն, առաւել դժուարաճաշակն քան զդառն և զլեղի : Իսկ այրն ապառաժ առանց հիւթոյ՝ երեւցաւ արմատ ծաղկազարդ, և զլուխ տնդոյն ի վեր անցանէ քան զբարձրութիւնս երկնից՝ անտի պտղեալ հացն կենաց, կերակուր աշխարհիս, որ ճաշակողացն պատրաստէ վայելելունն, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ, և [ի] սիրտ մարդոյ ոչ անկաւ :

Այսօր զուստր նախամօրն ծնանի տղայ զարարօղն և զհրաշագործօղն նախաճօրն :

Այսօր զուստրն Եւայի ծնանի տղայ, զորոյ ցանկացաւ նախահայրն նորա լինել իբրև զնա, որ յոսանձանէ նորա փախեան նախահայրն և նախամայր նորա :

Այսօր դուստրն Եւայի ծնանի տղայ, գանսկիդրն հօր՝ գանսկիդրնակից որդին, որ ծնաւ նախ քան դաւիտեանս ի Հօրէ առանց մօր:

Այսօր դուստրն Եւայի ծնանի տղայ զգոյացուցանողն հրեշտակաց, որ էր որդի, նախ քան դաւիտեանս անմայր ի հօրէ, և այժմ անհայր ի մօրէ նոր Մելքիսեղեկ:

Այսօր ստեղծողն ի ստեղծուածէն տղայ ստեղծեալ, զի գասպականեալ ստեղծուածն վերստին ստեղծցէ:

Այսօր բրուան ի կաւէ անօթ ստեղծանի, զի գիտորտակեալ անօթն վերստին նորոգեսցէ:

Այսօր ստեղծողն Աղամայ ծնանի ի դստերէն Եւայի, և Հայրն ի դստերէ որդւոյն որդի լինի:

Այսօր պղեցեալ գմերկութիւն Աղամայ, որ մերկացոյց զԱղամ, զի գագամային մարմինն Աստուած գործեսցէ:

Այսօր տեսի գայրն ոչ եթէ եղեմ, այլ լաշնադոյն երկինք, զի զարարողն երկնից և գոնկողն եղեմայ տարեալ մարմնով:

Այսօր տեսանեմ զխանձարուրն վերադոյն քան զթևասքողեալ քերորէքն, զի (գ)այն, որ յերեսաց նորա թևասքողեալ ծածկէին դերեսս իւրեանց, ի խանձարուրս պատիւ հաճեցաւ:

Այսօր տեսանեմ զմտուրն հաւասար աթոռոյն Աստուծոյ, զի ի վերայ նորա բազմեալ մարմնով որ (ն)ստեալ ի վերայ հրաձև քառակերպեան կենդանեացն:

Այսօր տեսանեմ զհոյիւքն աստուածատեսք եղեալք, զի վայելէին նութեղէն աչօք մարմնոյ տեսանել՝ զոր աննիւթ հրակերպ բազմ(ա)ջեայ սերորէքն տեսանել ոչ գորեն:

Ով անհասանելի խորհրդոյդ, ով սքանչելեացդ, ահաւոր Աստուած, որ ի վեր է քան զբարձրութիւնս հաստատութեան երկնից, և անտանելի անբաւ լաշնութեան նորա, ի նեղագոյն որովայնի բնակէ, և յաղօտ խանձարուրս պատի, և յանձուկ մըտուր տանի [= զնի?]: Ձեա՞րդ ոչ իցէ գերագանցիկ սքանչելի, Աստուած՝ մարդ լինի ստեղծուած, և մնայ նոյն ստեղծող, երկնաւորն խոնարհելով եղև երկրաւոր մարդ, և նոյն մնաց յերկինս՝ Աստուած երկնաւոր, մինն յերրորդութեան իջեալ՝ առ գծառայի կերպարան, և յերրորդութիւնն լիով բոլոր մնաց անթերի երրորդութիւնն. բանն ի ծոցոյ խոնարհեալ տանի ի վերայ զրկաց մայրական, և ոչ բաժանի ի ծոցոյ Հայրական:

Անչափ և անքննին է խորհուրդս այս սքանչելի, որ այսօր յայրին տրդայ լայ, և նոյն յերկինս Աստուած օրհնարանի. որ հինաւուրցն երևեցաւ Դանիէլի, այսօր աղայ երևի ծերունոյն: Մանուկ մարդարէն ի ծոռային կերպարանէ զարհուրեալ անչնչացաւ, և օրիորդ մարդարէնէն՝ գտէքն ծառային ծնաւ որդի և գորացաւ:

Որ տայ կերակուր ամենայն մարմնոյ այսօր ի կուսական ստեանցն՝ որպէս տղայ դիանայ, զարմացումն սքանչելեացն հիացուցանելով՝ գանդամս ներքին, և քոյս վերագոյն Աղամայ փշակերպ սովորութեամբ ի բնական սովորութիւն դարձեալ, և ի վեր դարձ ցուցանէ զիզանալով զգնացս իւր ի կերպս փշոց, կոյան որդի ծնանի առանց հօր և մնայ կոյս, զիկեցուցանէ, և տղայն մօրն նախնեացն յերկնից կերակուր պատրաստէր, տղայն որպէս ի մօրէ մանուկ ծնեալ, և ի ստեանցն կուսական իրրև ծընող զխնայր, և տղայն ծնողին արարող և կերակրող:

Բնութիւն ծընողին կուսի, և ստինքն մօր, խոր է իբրդ և անքննին, զիա՞րդ հնար է ի մի բնութենէ լինել մայր և կոյս, կամ մայր լինել և կոյս մը-

նալ : Ով ասուելուպէս սքանչելեացն , որովայն կուսին վերածայնէ ազա բարձի ,
 և մայրն հաւատարմացուցանէ՝ դայր ևս ոչ դիտեմ . արգանդն առէ՝ գոյ առ իս
 տղայ , և ծնողն վերագոչէր թէ կոյս մնացի : Ստինքն ձայնէին՝ կաթն բղիւ-
 ցաք , բնութիւնն աղապակէին թէ կնքեալ մնացի , կոյսն բարբառէր՝ մայր եղ ,
 և ծնունդք խօսէին՝ եթէ գերկունս ոչ կրեցաք : Մայրն առէր՝ կոյս ևմ և մա-
 նուկ գիեցուցանեմ , կուսութեան գրունքն ձայնէին՝ փակեալ մնացաք : Մա-
 նուկն առէր՝ նախ քան դաւիտեանս ի հօրէ անմայր սրղի ծնեալ ևմ , և աստ ի
 մօրէ անհայր սրղի եղէ :

Մայրն և կոյսն հիացուցանելով գերկինս և գերկիր , առէր՝ դանմայր
 սրղին երկնաւոր՝ անհայր տղայ ծնայ երկրաւոր : Երկիր արձակէր զձայն իւր
 և խօսէր՝ գրարձրութիւն երկնից զնստեալն ի բարձրութիւն ալդք՝ տեսի զիջ-
 եալ ի խոնարհութիւնս մեր . և արարօղն մեր՝ յարարած է իւրոյ իբրև արարած
 մարդ եղև , և է նոյն Աստուած :

Երկինք որտայր ասելով , աստի է լիով աստուածութեամբ , երկնա-
 յին գուարթունքն երկոցունց արարչութեանցն վկայք լինէին և խորհրդոյն խո-
 բին ոչ հասանէին , բնո գերազանտի տնօրէնութիւն հիանալին , և զարարչու-
 թիւնն երկու տեսանելով զի լի էին աստուածութեամբ նորա , օրհնարանելով ա-
 սէին . Փառք ի բարձունս Աստուծոյ . զի անդ է լիով աստուածութեամբ իւրով
 անտեսանելի ի հրեղինացն , յերկիր խաղաղութիւն , զի աստ խոնարհեցաւ լիով
 աստուածութեամբն , տեսանելի եղև մարմնեղինացն , և անտի ոչ պակասեալ
 նոյն անտեսանելի երկնաւորաց և երկրաւորաց : Զի ծածկեալ էր այս ամենե-
 ցունց տեսանել առանց սերման ծնունդ , կամ առանց հօր սրղի , կամ մայրն մը-
 նալ կոյս , Եթէ կոյս է , զիա՞րդ հնար է կոյս մնալ :

Տեսանեա նորասքանչութիւն սքանչելի , նորածնութիւն բնութեան ,
 կարի նոր , քանզի առ ամենայն բնութիւնս կանանց մինչ կոյսք լինի՝ մայրք ոչ
 իցին , և մինչ մարք լինիցին՝ կոյսք ոչ իցեն :

Աստար է իսկ մարդ պատի ի կուսութենէ , և սքանչելի է կուսութեան
 սրղերկրութիւն : Եւ երկօրամբք այդօքիւք զարդարեալ ի վեր քան զբնութիւնս
 տեսանեմք գրեթերեալ մայրն , և զանհարսնացեալ կոյսն , քանզի բերէ բնութիւն
 մայրական , և մնացեալ կոյս , բերէ ճշմարիտ բնութիւն կուսական , և կատար-
 եալ մայր :

Ոչ կուսութիւնն (և) զծնունդ խափանեաց , և ոչ ծնունդն զկուսու-
 թիւնն սպականեաց , այլ իբրև մայր սրղւով բերկրեալ , և իբրև կոյս ծնընդ-
 եամբ վերագոյեալ , իբրև մայր մարդկան երէէր , իբրև կոյս ի հրեշտակաց
 փառաւորէր , իբրև կոյս սրղւով , որ առանց հօր ցուցանէր , և իբրև մայր զոր-
 դին , որ էր առանց հօր , գիեցուցանէր : Մայր լինէր անապական ծնընդեամբ ,
 և կոյս անապական՝ ծնանէր անապական մարմին , (քանզի վայել էր անապա-
 կան մարմին) : Քանզի վայել էր անապական տնօրէնութեանցս այս ստակալի , զի
 սպասաւորէր յանապական սպասաւորութենէ , որ անապական մարմնով եղեալ
 յանապական կուսէ որդի , և ապականելոցս պարզեալ զանապական զկեանսն ,
 և ազատելով յապականութենէ անիծից :

Ոչ ևմ հասու առէ անհասանելի տնօրէնութեանց այդմ , յիբաւի առէ ,
 զի անգննելի և անհասանելի է : Ընդէ՞ր , զի աստուածային է ծնունդ մանկանս
 այս , որ ծնեալ այսօր ի կուսէ , քանզի նախ քան դաւիտեանս ծնեալ էր ի Հօրէ
 ստանց մօր . անսկիզբն , էակից հօր Աստուծոյ , անսկզբնակից սրղի և Աստ-
 ուած : Զի՞նչ ասես զառաւելապէս և զանպատում սքանչելեացդ , և կամ զի՞նչ
 արդ իսկ է այդ . զիա՞րդ հարցանես , և ոչ լուես և հաւատաս միայն , զի եթէ
 ծնընդեանս այս մարմնական հասանել ոչ կարացեր , եթէ զիա՞րդ առանց սեր-
 ման տնօրինեցաւ յութիւն , կամ թէ զիա՞րդ եղև սրղի ի մօրէ առանց հօր , կամ

զիւ՞րդ կոյան ծնանի առանց սերման, և մնաց կոյս, կամ զիւ՞րդ մտանելով աստուածային մանկանն սրանայն, և ի ծնունդն սոսկալի դրունք կուսական փակեալ մնացին, որ է անճառելի և անքննելի երկնաւորաց և երկրաւորաց, և դերագանց է քան զբնութիւն հոգեղինաց, և անբաւ ի խորին երկնաւորաց : Զիւ՞րդ ապա զառաջին ծնունդն ի հօրէ անեղ բնաւ հարցանել համարձակիս, զոր պարտ է լռութեամբ պատուել, զի եթէ յոես փառաւոր(ու)իս և բարձրանաս, և ի լռութիւնն զբարձրանալոյն փառաւորութիւնն աւանդէ, և գհաւատայն բոլորէ, և հետաքրքիր քննութիւն, անհաւատութեան առաջնորդէ :

Զի՞ յանդգնիս իմանալ, որ ոչ գտանես տեղի, որ ոչ կարացեր իմանալ եթէ զիւ՞րդ ձգեցաւ կամար հաստատութեան երկնից առանց սեան, և կամ զիւ՞րդ առանց հիման հաստատեցաւ երկիր ի վերայ ջուրց, եթէ զարարչութենէ արարողին զտեսանելի ոչ կարացեր իմանալ, զիւ՞րդ բնաւ հնար է զանտեսանելի զառաջին ծնունդն քննել, ուր յախտեանք և թիվք աւուրց ոչ խնդրի. քանզի Հայր էր անսկիզբն, և Որդի ծնաւ անսկզբնակից, ծնեալ և ոչ արարեալ, հուր ի հրոյ, յոյս աներկոյ, ի լուսոյ անմատոյց, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, որ էն և է և ժիշտ է, որ էր ի սկզբանէ Բանն առ Հայր, և Աստուած էր Բանն, Որդի Հօր, նախ քան զյաւիտեանս Որդի՝ առանց մօր :

Որդի միածին, Որդի հարթ, Որդի անօրինակ, Որդի անժամանակ, Որդի անսկսանելի, Որդի անտեսանելի, Որդի անպարագրելի, Որդի անպարփակելի, Որդի անայլայլելի, Որդի անսահմանելի, Որդի անորոշելի, Որդի անբաժանելի, Որդի անմեկնելի, Որդի աննկատելի, Որդի անհամեմատ, Որդի անփոփոխելի, Որդի անբաղադրելի, Որդի անխառնակելի, Որդի անդատելի, Որդի անժամանակ, Որդի անմահահան, Որդի անտանելի, Որդի աննկարագրելի, Որդի Աստուծոյ, և ինքն Աստուած :

Որդին՝ որդի լինի, էր Որդի Աստուծոյ, և եղև որդի մարդոյ, և մնաց անփոփոխելի Աստուած, որով ոչ էր՝ եղև և որով էր՝ մնաց, որով ոչ էր՝ էառ, և առեցելովն ոչ յաւելաւ, և առեցեայն եղև հաւասար առողին, և էր մարմին : Ոչ էր Աստուած մարմին, և եղև մարմին և մնաց Աստուած, ոչ էր մարմինն Աստուած և Աստուածացաւ այսօր, և ճանաչի ի մարմին, ոչ մարմինն աստուածութեամբն նեղեցաւ, և ոչ աստուածութիւնն մարդկութեամբն առաւելադրութիւն ինչ ընկալաւ. քանզի անփոփոխելի պատկեր հօր, և նկարագրելի մանջնաւորութեան նորա կերպարանցաւ ի կուսէն ի նմանութիւն մարդոյ : Որպէս ասէ Պօղոս՝ ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, զկերպարանս ծառայի առեալ, և կերպարանօք զտեալ իբրև զմարդ. վասն որոյ Աստուած զնա առաւել բարձրացոյց, և շնորհեաց նմա անուն, որ ի մեր է քան զամենայն անուն, զի յանուն Տեառն մերոյ Յի. Քրի. ամենայն ծունր կրկնեսցի՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց, և խոստովան լիցին եթէ Տէր է Յս. Քս. ի փառս Աստուծոյ Հօր :

Որ էր Հօր անեղ որդի՝ եղեալ և ոչ արարեալ, եղեալ ի մօրէ, և մնաց առ Հայր անբաժանելի : Որ էր անպարագրելի Հօր՝ որդի անպարագրելի, պարագրեցաւ ի մօրէ, և ոչ մեկնեցաւ ի Հօրէ : Որ էր անտանելի երկնից, տարաւ ի մտուր երկրի, և լի էին հաստատութիւն փառաւոր նորա : Որ էր ի սկզբանէ բանն Աստուած անմարմին՝ ի մարմնի թանձրացաւ, և շօշափեցաւ մարմինն, որպէս ասէ Որդին Որոսմանս. զորմէ լուաք, զնա տեսաք, և ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց :

Ես այդպէս զիտեմ, ես այդպէս հաւատամ, այլ թէ որպէս եղև ոչ զիտեմ. հաւատամ միայն և ոչ հետազօտեմ, զի ի խոր է քան զիմացութիւնս : Ճանաչեմ և հետաքրքիր ոչ լինիմ, քան զմիտս վերագոյն է խորհուրդս : Երկիր

պագանեմ և ոչ քննեցից, զի զերազոյն է քան զընութիւնս : Զի տեսանեմ աշօր տղայ, և խոստովանեմ նախ քան զյաւիտեանս Աստուած : Տեսանեմ մանուկ և խոստովանեմ Հինաւուրցն նստեալ : Տեսանեմ մարմին և խոստովանեմ զանդժօղն Աղամայ : Տեսանեմ պատեալ ի խանձարուրս և խոստովանեմ բնակեալ ի բարձրութիւնս երկնից : Տեսանեմ բազմեալ ի վերայ մարդ անբանից և խոստովանեմ նստեալ ընդ աջմէ Հօր ի վերայ քառակերպեան կենդանեաց : Տեսանեմ բարեալ ի վերայ զբկաց մաշրական և ոչ բաժանեալ ի ծոցոյն Հայրական : Ի յայրին սպասուորէր ի դաշեկաց և ի յերկինս երկրպագէր ի Հրեշտակաց :

Աստ տեսանելի մանուկ երկրաւորաց և յերկինս անտեսանելի Աստուած երկնաւորաց : Աստ իբրև մարմնաւոր ի մտուցն երկրպագի և ի յերկինս իբրև անմարմին Աստուած յանմարմնոցն բարեբանի : Աստ իբրև մարմնաւոր՝ մարմնաւորի որդի, և յերկինս անմարմին Հօր, անմարմին որդի :

Արդ՝ զի՞նչ կարացից ճառել զանճառելի խորհրդոյս այր, որ խոր է և անդունդք խորին : Ոչ կարեմ նկատել ի բարձրութիւն խորհրդոյդ, զի ի վեր անցանէ քան զբարձրութիւնս երկնից, քանզի տեսանեմ կին և ի կինն լայնազոյն երկինս : Կոյս մարմնեղէն և կոյսն աթոռ փերոքական բոցեղէն : Տեսանեմ մայր և մայրն կոյս և որդին մօրն ստեղծօղ : Տեսանեմ զիրկ ծնողական և ի զիրկն աթոռ սրտէական : Ոչ զիտեմ զինչ տեսանեմ, զի կատարին սոս քեզ, ոյ Աստուածամայր Տիրուհի. ծնանիս որդի որպէս մայր, և մնաս կոյս իբրև առանց ստն : Ունին օրինակ ստանցող մայրաճան, զընութիւն կուսութեանդ անաղական : Ոմ սքանչելեացս, մի բնութիւն ցուցանէր զգործ երկու բնութեանն, բնութեամբ որով ոչ էր եղև, և որով էր մնաց, ոչ էր մայր և եղև, էր կոյս և մնաց որպէս և էր :

Կաթն բղիէր իբրև մայր և դայր ոչ զիտէր, բնութիւն ստոյգ կուսական և զիեցուցանէր մանուկ, իբրև բնութիւն մայրական, բնութիւն կուսական ցուցանէր զընութիւն մայրական, և բնութիւնն մայրական ճամարիտ բնութիւն կուսական զպեցեալ զընութենէ կուսական : Այնպէս և ծրնեալն ի նմանէ բնութեամբ աստուածութեանն զպեցեալ ի նմանէ զընութիւն մարդկութեանս, և յաստուածային բնութենէն ոչ փոփոխեալ, այլ մնացեալ աստուածութեամբն անայրայելի և անփոփոխելի. այնպէս և ծրնեալն ի նմանէ կատարեալ երկու բնութեամբ՝ բնութիւն աստուածութեանն առեալ զընութիւն մարդկութեան, և ծրնացեալ Աստուած, և առեալ զընութիւն մարդկութեան և միաւորեալ ընդ աստուածութեանն իբրում, և Աստուածն կատարեալ եղև մարդ կատարեալ. ի մի բնութիւն միաւորեցան երկու բնութիւնն անբաժանելի և անորոշելի :

Տեսանի մարդ կատարեալ, և էր Աստուած կատարեալ. որպէս օտար էր ծնունդն մօրն, այնպէս օտար և մարդկութիւն որդոյն. մայրն ճանաչի և է ճշմարիտ կոյս, և որդին ճանաչի մարդ՝ և է ճշմարիտ Աստուած : Եւ որպէս ա՛նդ ոչ կուսութիւնն զծնունդն խափանեաց և ոչ ծնունդն բոկուսութիւնն սպականեաց, այնպէս և աստ ոչ աստուածութիւնն զմարդկութիւնն տկարացոյց, և որպէս ծնունդն կուսութեամբն փոռաւորեցաւ, և կուսութիւնն ծննդեամբն ոչ անարդեցաւ. այնպէս և աստ մարմինն խառնեալ յաստուածութիւնն և միաւորեալ զօրացաւ, և աստուածութիւնն մարդկութեամբն ոչ տկարացաւ :

Քանզի մեծ է խորհուրդս այս, մեծ և սքանչելի խորհրդով զործքն, և սքանչելի ծննդեան զարմարայի, զարմանի ծնունդ : Մայրն էր կոյս և եղև մայր և մնաց կոյս, և օրհնարանի ի Հրեշտակաց և ի մարդկանէ կոյս, և ճանաչի մարդ ճշմարիտ, և մայրն կոյս բարեբանի : Եւ զիտ՞րդ ոչ իցէ սքանչելի և հիանալի յոյութիւն առանց սերման, ծնունդն առանց երկանց, ծննդեանն բուսասաւորէր կուսութիւնն, կոյսն ի ծնունդն կոյս մնայր, ծնանէր ճշմարիտ մանուկն, և կուսութիւնն զապականութիւն ոչ կրէր, և մայր ճանաչի :

Զի՞նչ կարացից ճառելի գրէն և գխորհրդոյդ անճառելի, որ կատարեցան ի քեզ, եղեր ճշմարիտ մայր որդւոյ, և որդւոյն ոչ ճանաչի յերկրի հայր, և որդւոյ յերկինս Հայր, և անդ ոչ ճանաչի մայր: Անհարմարացեալդ հարմարացար յերկրի, և զփեսայն երկնաւոր ծնար որդի երկրաւոր, և զառապատ հարսանեաց յերկինս զարդարեցեր. դուտոր էիր հօր և զնախահայրն քո ծնար որդի, և արարողն հօր քոյ եղև ճշմարիտ որդի քո, քանզի որ ի քէն ծնեալ՝ զԱզամ սուղձեալ, և զԱզամ ալօսօր զգեցեալ ի քէն եղև որդի քո: Եւ ոչ եթէ միայն երկրաւորաց արարածոց է հիանալի խորհուրդդ այդ և զարմանալի, այլ և Երկնաւորաց հոգեղինաց, որ և զարմացեալ հիանալին, զի այնու՝ որ ի վեր էր, բայց քան զմերս, և անտեսանելի ի նոցանէ յերկինս, մերոյս եղև տեսանելի նոցա յերկրի, և նոյնն ուստի խոնարհեցաւ առ զմերս, անդ առանց մերոյնս մնաց անտեսանելի որպէս էրն:

Որով ոչ էր այսինքն է որով եղև և նոցա և մեզ երեւցաւ, և այնու որով եղև մեզ երեւցաւ, նոքա տեսին և հիացան, ասէին. Որ մերոյս զերկրոյ էր քան զմերս, տեսանեմք զնա խոնարհ քան զմերս հաւատար փառաց, որ փառացոյն է քան զմերս: Զի՞ ալդպէս զարհուրիք բոցանիւթ հրակերպք և անեղ հրոյն պաշտօնեայք, զի՞ զարմանայք, ով զիտակք Գալթեան մարդարկութեան. երգոցն ասել, փոքր ինչ խոնարհ քան զհրեշտակս արարեր զնա ասէ, որպէս և այժմ տեսանելով զարհուրիք. զի զոր արարածքդ ոչ զղեցայք, տեսայք զի արարիչն ձեր զգեցաւ և հիանայք խոնարհունաքդ? քան զձեզ որ է վերագոյն քան զձերդ: Եւ որք զխոնարհս քան զձեզ հիացուցանէիք այնու ի խոնարհացունէն հիանայք, և զայն որ խոնարհ տեսանէիք քան զձեզ Աստուած բարեբանեցէք, և ի վեր քան զձեզ, զոր և մերոյս կարացիք տեսանել՝ զայն որ ձերովդ իբրև զձեզ էր, և տեսանել ոչ կարէիք հրակերպ բաղամտչեալ աչօք: Տեսէք՝ որ էար խոնարհ քան զձեզ, բարձրագոյնն քան զձեզ տեսանել ոչ կարէաք, տեսաք զայն որ զուք տեսանել ոչ կարէիք:

Իսկ արդ՝ որ ձերովդ զմեզ հիացուցանէիք, մերոյս զուք հիացիք, յիբրաւի ստացեր ասէ, և վասնզի հիանալի է ասէ և զարմանալի, և մեզ անմարմնոցս մարմնաւորոյ անօրէնութիւնդ, անմարմնոյն արարողին անմարմնոցս: Ոչ կարեմք հասանել խորհրդոյդ խորին, միայն փառարանելով ասեմք, փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն: Զի ի բարձունս տեսանեմք զփառս մանկանդ ծնելոյ այդր, և յերկիր խաղաղութիւն, զի էր լցեալ անիծիւք, բերօղ փշոյ և տատասիկի, պատերազմելոյն տեղի, դատադարաութեան ընդունօղ, արտաքսելոյն տեղի, արտմութեան հաւաքարան, և մահու պատուհասի ժողովարան, և արդէն ընկալաւ զխաղաղութիւն:

Զեռ. Ս. Գ. Թիւ 154ա

Հրատ. Ա. Գ. ՍՐՃՈՒՆԻ

(Շար. 6)



Ս. ՅԱՎՈՐԻ ԵՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

* Ծր. 1 Մարտ.— Ս. Սարգսի Զորավարին: Ս. պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգիսի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: Ս. պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ ազգային մեծ բարերար Գարուստ Կիլիպէնկեանի հօր՝ Սարգիսի հոգիին համար:

* Կիր. 2 Մարտ.— Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութին, Ս. Լուսատրիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուշարեան:

* Ծր. 8 Մարտ.— Իսահակայ Պարթևի հայրապետին: Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Դշ. 12 Մարտ.— Վարդանանց հանդիսատր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Եշ. 13 Մարտ.— Ս. Վարդանանց զօրավարացն մերոց 1036 վկայիցն (Յիշատակ մեռելոց և տօն ազգային): Այս տօնը Ս. Աթոռոյս մէջ նկատուած ըլլալով տօնը ժառանգատր սաներուն՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ սուրբ պատարագը մատուց ժառ. Վարժարանի և Ընծայարանի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Աղան Վրդ. Պայիօզեան, որ խօսեցաւ նաև Երուսաղէմի մէջ առաջին իր քարոզը, բնաբան ունենալով «Եւ հեղին զարին իրեանց ի փրկութիւն եկեղեցոյ» Վարդանանց շարականի բառերը, և փորձեց հակիրճ կերպով ներկայացնել մեր պատմութեան մը-

նալ այդ շրջանը, երբ Վարդանանք խիզախեցան մահուան դէմ, վասն կրօնի և հայրենեաց: Քարոզէն ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք»՝ Ն. Ս. Օ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Առաջինի անուան տօնին առիթով, իսկ պատարագէն ետք հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ նախագահութեամբ Հոգշ. Տ. Կիրեղ Մ. Վարդապետի:

* Որ. 14 Մարտ.— Ըստ սովորութեան, պատարագ մատուցուեցաւ Ողղափառ Ասորիներու Ս. Մարկոս Անտարանիչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան, որ «Հայր մեր»էն առաջ խօսեցաւ, Սրբավայրին պատմականը ընելով: Երթուղարձի թափօրները գլխատրեց Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան: Արարողութեան աւարտին՝ Միաբանութիւնը պատուաւիրուեցաւ Ասորիներու Գերշ. Եպիսկոպոսէն:

* Ծր. 15 Մարտ.— Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն (381): Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

— Երեկոյեան ժամերգութեան ընթացքին տեղի ունեցաւ Մայր Տաճարի խորաններուն և գլխատր սրբանկարներուն վարագորումը: Ներկայ էր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, որ փակեց վարագոյրը Աւագ Սեղանին:

* Կիր. 16 Մարտ.— Բուն Բարեկեղան: Փակեալ խորանի պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Դշ. 19 Մարտ.— Սկիզբն կարգաց Մեծի

Պահոց: Առտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Արևազայ»ի առաջին ժամերգութիւնը, իսկ կէսօրէ ետք՝ «Թաղաղական» առաջին ժամերգութիւնը:

* Որ. 21 Մարտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Ա. Թորոս եկեղեցիին մէջ, որ ձեռագրատունն է Ա. Աթոռոյ: Հանդիսապետն էր Գեորգ. Տ. Ծախէ Արքեպս. Աճճեան:

* Ծր. 22 Մարտ.— Ա. Թէոդորոսի գորավարին: Ա. պատարագը մատուցուեցաւ Ա. Թորոս եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Նորիան Վրդ. Մանուկեան:

— Վաղուան Արուսեանս Կիրակիի առիթով, կէսօրէ ետք ժամը 3-ին, Ամեն. Պատրիարք Ա. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մտոք գործեց Ա. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երկնյան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ Ա. Գր. Լուսարիչ եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ տնօրինական արքայտէղիներու այցելութեան հանդիսարար թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 23 Մարտ.— Արուսեանս: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և սուրբ պատարագը մատուցուեցաւ Ա. Լուսարիչ: Ժամարարն էր Հոգ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան: Ապա կատարուեցաւ երազարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ա. Գերեզմանին և Պատմամատենիին շուրջ, գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ա. Հօր:

* Գշ. 25 Մարտ.— Երեկոյեան, Ա. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուեցաւ Մեծ Պահոց «Եկեղեցի»ի առաջին ժամերգութիւնը:

* Եշ. 27 Մարտ.— Երեկոյեան, Մայր Տաճարին մէջ կատարուած Մեծ Պահոց «Եկեղեցի»ի առաջին ժամերգութեան նախագահեց և քարոզեց Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան, «Միրեցեա զընկեր քո իբրև զանձն քո» քնարանով:

* Ծր. 29 Մարտ.— Ա. Կիրոյի Երուսաղիմայ Հայրապետին: Ա. պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ա. Կիրեղի սեղանին վրայ, որուն ներքեր ցոյց կը տրուի այն աւագանը՝ ուր Ա. Կիրեղ Երուսաղէմի Հայրապետը, 351 թուականին, Ա. Խա-

չի լուսարման երևան օրը քազմահարիւր նորադարձներ մկրտած է: Ժամարարն էր Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Կիր. 30 Մարտ.— Անտակին: Ա. պատարագը մատուցուեցաւ Ա. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տառտլարեան: Քարոզեց Հոգ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաթիկեան, մեկնարանելով Անտակի աւետարանական առակը:

* Ծր. 5 Ապրիլ.— Ա. Յովհաննէմ Երուսաղիմայ հայրապետին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխաւոր: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տառտլարեան:

— Կէսօրէ ետք, վաղուան Տնտեսի Կիրակիին առիթով, Միաբանութեան մէկ մասը, Հոգ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ.ի գլխաւորութեամբ, քարձրացաւ Զիթենեաց լեռ, ուր, Համբարձման արքայադին վրայ կառուցուած վրանամատուին մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ:

— Գիշերակիցիին, նոյն վայրին մէջ կատարուեցան «Եկեղեցի»ի և Հսկման արարողութիւններ, և այսպէ՛ գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ: Ա. Պատարագ մատուցուեցաւ Համբարձման մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Աղան Վրդ. Պայիօզեան: Արարողութիւններուն կը նախագահէր Հոգ. Տ. Կիրեղ Ծ. Վարդապետ: Ժամը 11-ին Միաբանութիւնը Մայրավանք վերադարձաւ:

* Կիր. 6 Ապրիլ.— Տնտեսին: Առտուն ժամը 8.30ին, Գեորգ. Տ. Ծախէ Արքեպս. Աճճեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով քարձրացաւ Զիթենեաց լեռ ու «Հրաշափառ»ով մտոք գործեց Համբարձման արքայտէղին՝ ուր մեր վրանամատուին մէջ Ա. Պատարագ մատուց Հոգ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաթիկեան, եպիսկոպոսական խոյրի գրուի:

* Եշ. 10 Ապրիլ.— Իրկիւտան Հսկման նախագահեց և քարոզեց Գեորգ. Տ. Ծախէ Արք. Աճճեան, քնարան ունենալով «Զի թոշակն մեղաց մահ է, իսկ շնորհքն Աստուծոյ՝ կեանք ռախտնեանական»: Վերլուծեց իսկութիւնը մեղքին և ցոյց տուաւ կերպերը զան յաղթահարելու:

* Որ. 11 Ապրիլ.— Վաղուան Քառասուն

Մանկանց տօնին առիթով, կէսօրէ ետք Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուեցաւ «Խաղաղական» ժամերգութիւն, իսկ գիշերասկիզբին Հսկման արարողութիւն, որուն ընթացքին քարոզից վանքի Տեսուչը՝ Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփանեան, զոչումի և ապաշխարութեան մասին: Ժողովուրդը իր քարեպաշտական զգացումները յայտնեց Քառասուն Մանկանց նկարին առջև մոմաւառութեամբ և ձէթի նոտիրատութեամբ:

* Ծր. 12 Ապրիլ.— Ս. Քառասուն Մանկանցն Սերաստիոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջև շինուած շարժական սեղանին վրայէն, որուն դիմաց, կաթսայի մը մէջ դրուած էին զոյնզոյն քառասուն կանթեղներ, աւանդական սառցապատ լիճը խորհրդանշող:

— Կէսօրէ ետք, վաղուան Դատարարի Կիրակիի առիթով, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Պատանատեղիին և Ս. Գերեզմանի ուխտերէն ետք, թափօրը իջաւ Գիւտ Խաչի արդը և ապա բարձրացաւ անոր կից՝ Ս. Գր. Լուսատրիչ եկեղեցին, ուր պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա Տաճարէն ներս կատարուեցաւ տնօրինական սրբատեղիներու այցելութեան հանդիսատր թափօր: Թափօրապետն էր Հոգ. Տ. Աղան Վրդ. Պայփօզեան:

* Կիր. 13 Ապրիլ.— Դատարարին: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Լուսատրիչ: Ապա, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը մատուց օրուան հանդիսատր Ս. Պատարագը Բրիտանի Ս. Գերեզմանին վրայ, որմէ ետք նախագահեց Ս. Գերեզմանին և Պատանատեղիին շուրջ կատարուած մեծահանդէս թափօրին: Արարողութիւնները ձայնասփռուեցան իւրաքանչեան ռատիօկայանէն: Վանք վերադարձին, Հայոց Թաղի մուտքէն, Միաբանութիւն և ռասանդութիւն «Որ պատուիրան» շարականի երգեցողութեամբ յառաջացան դէպի Մարտավանք:

* Գշ. 15 Ապրիլ.— Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուած Հսկման արարողութեան ընթացքին քարոզեց Հոգ. Տ. Գե-

ղարդ Արդ. Տառտուարեան, բացատրելով իմաստը մեր Տիրոջ հետևեալ խօսքին. «Որ կամի ինձ աշակերտ լինի՝ բարձրէ զիս իր և եկեցցէ զկնի իմ»:

* Որ. 18 Ապրիլ.— Ս. Գր. Լուսատրիչի վիրապանութի նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճեմեան:

* Ծր. 19 Ապրիլ.— Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսատրչին: Յիշատակ չարչարանաց և մըտանկելոյն ի վիրապն: Առտուան ժամերգութեան աւարտին, Ս. Լուսատրիչի մատուցը իր հանգստարանէն թափօրով փոխադրուեցաւ Աւագ Խորան՝ ձեռամբ Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոսի: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ աւանդատան Ս. Լուսատրիչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

— Ս. Կոյսի Աւետման հանդիսատր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճեմեան:

* Կիր. 20 Ապրիլ.— Գալստեան Կիրակի և Աւետումն Ս. Աստուածածնի: Առտուն, Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով մեկնեցաւ Գերեզմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնի Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսատր Ս. Պատարագը մատուց Գերշ. հանդիսապետ Սրբազանը:

* Գշ. 22 Ապրիլ.— Երեկոյեան, Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուեցաւ Մեծ Պահոց Հսկման վերջին արարողութիւնը:

* Եշ. 24 Ապրիլ.— Ապրիլեան Եղեռնի վաթսունամեակին առիթով, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ հանդիսատր Ս. Պատարագ: Պատարագեց և քարոզեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճեմեան, նիւսնենալով մեր նահատակներու սրբազան պատգամը: Քարոզէն ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն, իսկ նոյնը կրկնուեցաւ ապա Ս. Փրկիչի ազգային գերեզմանատան մէջ, Արարայի հերոսներու յուշարձանին մօտ, ուր Միաբանութիւնը զնաց Ս. Պատարագէն ետք, թափօրական զնացքով, դարձեալ գլխաւորութեամբ

Ամեն. Պատրիարք Ս. Հօր և առաջնորդութեամբ քաղաքի բոլոր հայկական միութիւններու արհներուն և արեւոյշներուն: Պր. Յակոբ Տէմիրճեան, յուշարձանին մօտ, ոգևորչեց յիշատակը Ապրիլեան մեր բխրատր նահատակներուն:

* Որ. 25 Ապրիլ.— Խ. օր մեծ պահոց: Առտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Առնագայ»ի վերջին ժամերգութիւնը, իսկ կէսօրէ ետք՝ «Խաղաղական» վերջին ժամերգութիւնը:

* Շր. 26 Ապրիլ.— Յիշատակ յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխաշիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Աղան Վրդ. Պատիօզեան: Ս. Թարգմանչաց Մանկապարտէզի ուսանողութիւնը Ս. Հաղորդութիւն տուցաւ:

— Վաղուան Ծաղկազարդի առիթով, կէսօրէ ետք, Միաբանութիւնը, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխատրութեամբ, «Հրաշափան»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նահատակները՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Առաջ Տաճարէն ներս կատարուեցաւ տրևօրինական սրբատեղիներու այցելութեան հանդիսատր թափօր: Թափօրապետն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պարսմեան:

* Կիր. 27 Ապրիլ.— Ծաղկազարդ: Առտուն, Միաբանութիւնը, զոյգ թափօրներով, առաջինը՝ գլխատրութեամբ Հոգ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուրի, իսկ երկրորդը՝ Գերշ. Տ. Ծափէ Արք. Աճէմեանի, մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ: Ժամարարն էր Հոգ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան: Ապա, Գերշ. Տ. Ծափէ Արքեպիսկոպոսի գլխատրութեամբ մեծահանդէս թափօր կատարուեցաւ Բրիտոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղիին շուրջ: Թափօրականներ ի ձեռին ունէին ձիթեմի և արմատեմի ոստեր, իսկ մեր թափօրին կը հետնէին Ղպտիներու և Ատրիներու թափօրները: Արարողութիւնները տեւեցին մինչև կէսօրը անց, որմէ ետք Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք և Հատց Թաղի մուտքէն «Որ զխորհուրդ քր Օսրտեան» շարականը երգելով յառաջացաւ և քարձրացաւ Պատրիարքարան:

— կէսօրէ ետք, շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան», ապա տօնին յատուկ հոգեգրաւ շարականներով ընդմիջուած երկնյեան ժամերգութիւն և Դոնքագէթի խորհրդատր արարողութիւնը, բոլորն ալ նահապահութեամբ Գերշ. Տ. Ծափէ Արքեպիսկոպոսի: Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան կարդաց «հոգևոր սիրով և փափաքով» վարագոյր բացողներու անուանացանկը և կոչ ըրաւ ներկաներուն որ իրենց լուծանքով նպաստեն Ազունիէի Ազգ. Բուժարանին մէջ դարմանուող իրենց ազգակիցներուն: Այդ նատակաւ, եկեղեցիի զոյգ մուտքերուն պնակներ դրուած էին:

* Գշ. 29 Ապրիլ.— Աւագ Երեքշաբթի (Յիշատակ տան կուսանաց): Ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան գառիթին արևելակողմը գտնուող Ս. Յովհաննէս Անետարանիչի հայապատկան մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեորգ Արդ. Տառտարեան: Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի և Նախակրթարանի բովանդակ ուսանողութիւնը Ս. Հաղորդութիւն տուցաւ: Երթուդարձի թափօրները գլխատրեց Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պարսմեան, որ նահապահեց նաև արարողութիւններու ասարտին, Ս. Յարութեան Տաճարէն ներս կատարուած տևօրինական սրբատեղիներու այցելութեան հանդիսատր թափօրին:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Զ

* Որ. 14 Մարտ.— Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ժընև) անդամ Վեր. Ժորժ Աէթուս այցելեց Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

— Ս. Աթոռիս երիտասարդ միաբաններէն Հոգ. Տ. Խաժակ Վրդ. Պարսմեան, մեկնեցաւ Միացեալ Նահանգներ, իբրև հոգևոր հովի Ուօրչէսթէրի:

* Բշ. 17 Մարտ.— Յունական նոր հիւպատոս Պր. Քօնսթանթին Փրէվլտուրաքիս իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Գշ. 25 Մարտ.— Յունաստանի Անկախութեան տօնին առթիւ, Յունական ընդհ. հիւ-

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ և օրհնութեամբ կ'արձանագրենք 1974 տարու ընթացքին

Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերու տրուած հետեւեալ բարեպաշտական նուէրները:

1. Տկն. Մարիամ Քէշիշեան, բնիկ Մարաշ-ցի, Պէրոթաբնակ, կը նուիրէ սեղանի ծածկոց մը մէջտեղը խաչով մը և սովորական քարերով:

2. Ալֆրէտ, Ալէ և Կարէ Պօղոսեաններու կողմէ մէկական փոքրիկ խաչիկներ՝ մետաղէ. Տկն. Ժէնիկ Աղանանեան, բնիկ Թեհրանցի կը նուիրէ Նոր Ջողայի ձեռագործ սեղանի ծածկոց մը, չորս կողմերը գրուած. «Անուն Հօր և Որդոյ, Ամէն»:

3. Տկն. Ռօզա Աղանանեան կը նուիրէ երկու փոքր խաչիկներ, գիգելէ փոքր կապուտ քարերով և միջակ խաչ մը կապուտ պատկերով և Աւետարանի բռնիչ մը:

4. Տկն. Ալիս Սևան, բնիկ Այնթապցի, Երուսաղէմաբնակ, կը նուիրէ գոյգ մը աշտանակ, Թէրա Սանթայի գործ, պղնձեայ, Ս. Թորոսի եկեղեցւոյն, գոյգ մը Աւետարանի բռնիչ, կարմիր յատակով, արծաթաթել երիզներով և խաչերով, գոյգ մը խաչի ճերմակ բռնիչներ, դեղնորակ երիզներով:

5. Օր. Հայկանուշ Նալպանտեան, Երուսաղէմաբնակ, կը նուիրէ Ս. Գլխադրի ճերմակ ձեռագործ սեղանի ծածկոց մը, և քոր-

փորա մը Ս. Աստուածածնայ Հէթում թագաւորի սեղանին:

6. Պէրոթաբնակ Յակոբ Գույումճեան՝ Տ. Գիսակ Վարդապետի ձեռամբ կը նուիրէ քորփորա մը Ս. Յակոբայ Տաճարին:

7. Տկն. Հերմիգէ Սիպեան, բնիկ Մարաշցի, Պէրոթաբնակ, կը նուիրէ սեղանի ծածկոց մը կարմիր յատակով, եզերքները բանուած ոսկեթել ծուլերով:

8. Տկն. Ծաբէ Գալայճեան, բնիկ Մարաշցի, Երուսաղէմաբնակ, կը նուիրէ սկիհի ծածկոց մը, կարմիր յատակով, ոսկեգոյն փուլերով և ծուլերով և երիզով գործուած:

9. Տկն. Մարիամ Ծանարգեան, բնիկ Մարաշցի, վանքաբնակ, կը նուիրէ սպիտակ քորփորա մը Ս. Գլխադրի խորանին:

10. Տկն. Ծաբէ Գալայճեան, բնիկ Մարաշցի, Երուսաղէմաբնակ, կը նուիրէ կարմիր յատակով փուլլու խաչերով և արծաթեայ եզերքներու ծուլերով երկու խաչի բռնիչներ Ս. Յակոբայ Տաճարին:

ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Լուսարարուպետ Ս. Աթոռոյ

պատոասարանի մէջ, հիւպատոսին կողմէ տըրուած ընդունելութեան ներկայ եղաւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Դիւանապետ Գերշ. Տ. Ծահէ Արք.ի:

* Գշ. 1 Ապրիլ.— Երոզպական Ս. Չատկի տօնին առիթով, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, Միաբանութեան անդամներուն ընկերակցութեամբ, շնորհատրական այցելութեան զնաց Ֆրանչիսկեաններու Գերշ. Կիւսթոտին և Լատիններու Ամեն. Պատրիարքին: Յետոյ, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճմեանի, նոյն առիթով այցելեց Պապական Նուիրակին և

Անկլիքան ու Արար Անկլիքան Եպիսկոպոսներուն: Իսկ Հոգշ. Տ. Հայկասեր Վարդապետ, Հոգշ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Կաթողիկ և Բողոքական փոքր յարանուանութեանց ներկայացուցիչներուն:

* Գշ. 16 Ապրիլ.— Կէսօրին, Իսրայէլի Անկախութեան 27րդ տարեդարձին առիթով, Երուսաղէմի Բաղաքապետ Վսեմ. Թէտի Քօլլէքի կողմէ Դաթի Բերդին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճմեան, Հոգշ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գաբրիէան և Տիար Կ. Հիմդեան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

| | | |
|---------------------------------------|--------------------------|----|
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ | | |
| Կամքի Ուժը | Ա. Գ. | 50 |
| ԴԻԻԱՆ Ս. ՏԵՂԵԱՅ | | |
| Տեղեկագիր | ԿԻՐԻԵՂ Ծ. ՎՐԴ. ԳԱԲԻԿԵԱՆ | 52 |
| Ս. Աթոռիս Բարերար | | |
| Տիար Տատուր Տատուրեանի Այցելութիւնը | | 54 |
| ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ | | |
| Տեսական Աստուածաբանութիւն | ՄԱՂԱԲԻԱ ԱՐԲԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ | 56 |
| ԿՐՕՆԱԿԱՆ | | |
| Կանայի Հարսանիքը | ԳԵՈՐԳ Ս. ՃԻՆԿԿԻՋԵԱՆ | 61 |
| Ս. Պատարագ և հոգեհանգիստ Ապրիլեան | | |
| Եղեռնի Վաթսուճամեակին առիթով | | 63 |
| Հեռագիրներ | | 64 |
| ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ | | |
| Ազատութիւն | ՓՕԼ ԷԼՈՒԱՐ | 66 |
| Մարտիրոսներուն | Թրգմ. Ս. Ա. Մ. | |
| Քառեաններ | ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ | 69 |
| | ՄՈՒՐԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ | 70 |
| ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ | | |
| Ժամանակագրական Նօթեր | ԾՈՎԱԿԱՆ | 71 |
| ՁԵՌԱԳՐԱԿԱՆ | | |
| Ցուցակ Ձեռագրաց Հարթֆլըտի | | |
| Աստուածաբանական Ճեմարանի | Յ. ՔԻՐՐԵԱՆ | 79 |
| ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ | | |
| Ներքողեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչիւն | Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ | 84 |
| Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ | | |
| Եկեղեցականք - Բեմականք | | 90 |
| Պաշտօնականք | | 93 |
| Բարեպաշտական Նուէրներ | | 94 |
| Բովանդակութիւն | | 95 |

C O N T E N T S

| | | |
|-----------------------|---|------------------------------|
| EDITORIAL | | |
| 53 | Will power | A. K. 50 |
| BUREAU OF HOLY PLACES | | |
| 53 | Report on the agreement between the three Patriarchates in Jerusalem | Rev. Guregh Kapikian 52 |
| 54 | Visit of Mr. Dadour Dadourian | 54 |
| THEOLOGY | | |
| 58 | Rudiments of Theology | Archbp. Maghakia Ormanian 56 |
| RELIGION | | |
| 58 | The Marriage of Cana | Kevork S. Geneviesian 61 |
| 63 | Requiem Mass for the Armenian martyrs of the First World War | 63 |
| 63 | Cables | 64 |
| POETRY | | |
| 66 | Freedom | Paul Elouard 66 |
| 66 | To the martyrs | Trans. A. S. M. 69 |
| 68 | Rubayats | Alicia Guiragossian 69 |
| 68 | Rubayats | M. Manoukian 70 |
| CHRONOLOGY | | |
| 71 | Chronological notes | Dzovagan 71 |
| MANUSCRIPTS | | |
| 71 | Catalogue of Manuscripts of the Hartford Theological Seminary | H. Kurdian 79 |
| PHILOLOGY | | |
| 75 | Eulogy for St. Gregory the Illuminator | Ed. A. H. Serjouni 84 |
| 90 | Monthly news from the Armenian Patriarchate | 90 |
| 96 | Contents | 96 |

Yearly subscription: 10 U. S. Dollars

All correspondence should be addressed to:

Ara Kalaydjian, The St. James Press

P. O. Box 14001, Jerusalem — Israel